№ 169 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24

1905

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍ՝ 24 № 169

ԵՐԵՍՈՒՆՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վանքապատկան գոյքեր. Ի՞նչ անել. Քաղուածքներ «Արարատից». Նախիջևանի ազգաթի զոհերի օգտին. Թիֆլիս—Լոռի—Բերլին. Նամակներ Նուխուց, Երևանից, Վերին-Ագուլիսից, Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Տեղեկութիւններ Թիւրքահայերի կեանքից.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պաշտօնական հաղորդագրութիւնը որոշակի կերպով հերքում է այն սուտ տեղեկութիւնները, որոնք այնքան անբարեխիղճ և խեղաթիւրված հաղորդված էին ռուսական գործակալութեան կողմից։ Ովքեր են այդ գործակալութեան մոլորեցնում և ինչ նպատակով։ Մենք չիշում ենք, որ նոյնպիսի կեղծ և անբարեխիղճ կերպով շարադրված հեռագիր տուել էին գործակալութեան և Երևանի դէպքերի ժամանակ։ Այն ժամանակ շատերը լռեցին, կարծելով, որ դա թիւրիմացութիւն է, մի սխալ է, ինչպիսին կարող է ամեն մի գործակալութեան հետ պատահել։ Բայց այս անգամ կեղծիքը կրկնվում է և շատ անպատկառ կերպով ու նենգամիտ բովանդակութեամբ։

Ներկայ ծանր օրերում այդպիսի չարամիտ խաղերը թէ տգեղ են և անբարոյական և թէ չափազանց բնորոշ։ Ովքեր են հեղինակները և ինչի՞ վրա են նրանց յոյսերը։ Մի՞թէ իրողութիւնները կարելի է փոխել ըստ հաճոյքի։ Բնորոշ է։

Հեռագիրները և եկողների պատմածները ցոյց են տալիս, որ յուզմունքները Բագուի շրջանում դեռ չեն դադարել և կարող են տեղի ունենալ բարդութիւններ։

Ճիշդ է, Բագու քաղաքում շնորհիւ զօրքի աջակցութեան, տիրում է խաղաղութիւն, կամ ճիշդն ասած բռնադատված խաղաղութիւն, սակայն նաւթահանքերում դրութիւնը շատ վտանգաւոր է։ Սաբունչիի և Բալախանիի նաւթահանքերի շինութիւնները այրվում են անարգել կերպով։ Նաւթահանքերից ազգաբնակութեանը անզօր է օգնել այնտեղ գտնվող զօրքերի վաշտը, որովհետև յարձակվող Թուրքերի բազմութիւնը շատ մեծ է և սպառնալի է նոյն իսկ փոքրաթիւ զօրքի համար։ Երէկ երեկոյեան ուշ հեռագիր ստացանք, որ զօրքի թիւը աւելացրած է, Բիբի-Հէյբաթում այրվում են Միլովի, Զուբալովի, Մանթաշեանի և Բնիաթի հանքերը։

Շուշի քաղաքում առ այժմ հանգստութիւն է տիրում։ Այնտեղ զգացվում է հացի մեծ պակասութիւն, որովհետև շրջակայ գիւղերից հաց և մթերքներ չեն մտնում քաղաքը։ Փոխարքայի օգնականը կարգադրել է, որ Գանձակի մատակարար պահեստից Շուշի ուղարկվի հացի պատրաստ պաշարը։

Զանգեզուրի գաւառից ստացված տեղեկութիւնները շատ տխուր են։ Երեք գիւղ՝ Մինքեանդ, Խոզնավար և Զէյվա ենթարկվել են աւերի, կողոպուտի, հրդեհի և կոտորածի։ Ժողովրդից ով հնարաւորութիւն է ունեցել ազատվելու, փախել է դէպի շրջակայ գիւղերը ապաստանվելու։

Մեզ հաւատ ծանր և անչափ ծանր է ամեն օր արձանագրել նորանոր աւերածների և կոտորածների սոսկալի լուրերը։ Կովկասցիներ. այս ինչ օրերումն ենք մենք։ Մի՞թէ մեռել է բանականութիւնը, խելքը և խիղճը մարդկանց մէջ։

Ո՞ւմ է հարկաւորը մեր երկրի թշուառութիւնը, մեր երկրի ժողովրդի արիւնը։ Ինչո՞ւ աւերող և քայքայող ձեռքը յետ չէ կենում իր չար գործից։

—

Գանձակի փոխ-նահանգապետ Բարանովսկու պաշտօնական հեռագիրը կովկասեան ոստիկանութեան գլխաւորի անունով։

(Ստացված օգոստոսի 23-ին)

Ներկայ օգոստոսի 16-ին, մասնաւոր անձերի մէջ տեղի ունեցած ընդհարումների պատճառով, Շուշու ազգաբնակութիւնը դիմեց զէնքի, բաժանվելով ըստ ազգութիւնների, որոնք գրաւելով իրանց համար դիրքեր, սկսեցին հրացանաձգութիւն, չանալով ներս խուժել՝ Թուրքերը դէպի հայկական մասը, իսկ հայերը դէպի Թուրքականը։ Օգոստոսի 18-ին հնարաւոր եղաւ ժողովել երկու ազգութիւնների ներկայացուցիչներին, ուղարկել պատուիրակներ քաղաքի զանազան մասերը, յայտարարելով հաշտութիւն։ Զը նայելով այս հանդամանքին, հրացանաձգութիւնը թոյլ կերպով շարունակվում էր քաղաքում և հրդեհները քամու շնորհիւ տարածվում էին։ Օգոստոսի 19-ին նորից ժողովվեցին հոգևորականութիւնը և ազգաբնակութեան ներկայացուցիչները փոխ-նահանգապետի հետ միասին, որոնք շրջեցին քաղաքը։ Հրացանաձգութիւնը շարունակվում էր։ Օգոստոսի լոյս 20-ի գիշերը հրդեհվեց նորից մի տուն, որի պատճառով նորից յուզվեցին կրքերը։ Օգոստոսի 20-ին հրացանաձգութիւնը նորոգվեց աւելի մեծ ոյժերով։ Տեղի ունեցաւ հրդեհ։ Բայց Թուրքերի ներս խուժման բոլէին հոգևորականութեան աջողվեց կազմել քաղաքում փառաւոր թափօր։ Օգոստոսի 20-ից քաղաքում հանգստութիւն է տիրում։ Գաւառներում տեղի ունեցան ընդհարումներ։ Սպանված և վիրաւորված մարդկանց ընդհանուր թիւը մօտաւորապէս հասնում է 200-ի։ Այրվել է մօտաւորապէս 200 տուն։ Փոխ-նահանգապետը վիրաւորված չէ։ Ռուսական հեռագրական գործակալութեան հաղորդած տեղեկութիւնները Շուշու անկարգութիւնների մասին փոխ-նահանգապետի ասելով ամենևին համաձայն չեն իրականութեան։

—

Բագու 22 օգոստոսի

(Պաշտօնական)

Հրաձգութիւնը, որ առաւօտեան աւելի սաստիկ էր, երեկոյեան դէմ շնորհիւ գեներալ-նահանգապետի ձեռք առած խաղաղացման միջոցների, թուլացաւ։ Տեղի ունեցան ընդհարումներ զօրքի հետ, որոնցից կան զոհեր։ Սաստիկ կերպով հրացանաձգութիւն սկսվեց Բալախանում, որտեղ իրերի դրութիւնը բարդացաւ մեծ հրդեհների պատճառով։ Գիշերը նկատվեցին փորձեր հրդեհ առաջ բերելու և քաղաքում, բայց նրանց առաջն առնվում էր շուտով։

—

Շուշուց, երէկ, օգոստոսի 23-ին ստացանք հետևեալ հեռագիրը, որ տրված է օգոստոսի 22-ին, 9 ժամ 15 բոպէին.

«Օգոստոսի 20-ին, ամբողջ հոգևորականութեան և քաղաքի երկու կողմերի պատուաւոր անձանց ներկայութեամբ տեղի ունեցաւ խաղաղ պրոցէսիայի հանդիսաւոր թափօր։ Հինգ օրվայ ընթացքում տեղի ունէր սարսափելի հրացանաձգութիւն երկու կողմերից։ Հայերի նիւթական վնասը ահագին է։ Քաղաքի գլխաւոր փողոցը նրա վրա գտնված բոլոր հարուստ շէնքերով, տներով և մագազիններով այրվեց սարսափելի հրդեհից, որ բռնել էր երկու եկեղեցիների շրջակաները։ Եկեղեցիները թէպէտև չայրվեցին, բայց մի քանի նշաններից երևում է, որ ցանկացել են այրել Ագուլեաց եկեղեցին, բայց աջողութիւն չեն ունեցել։ Եկեղեցու ներսը տեղ-տեղ կողոպտված է։ Մարդկային զոհերը մեծ չեն։ Սպանվածների թիւ մասին կը հաղորդենք յետոյ։ Հրդեհի պատճառով հեռագրական հաղորդակցութիւնը ընդհատված էր։ Օգոստոսի 18-ին ինձ ուղարկված հեռագիրները ստացված են միայն երէկ։ Կայացած խաղաղութեան մասին հաղորդված է ամեն տեղ գաւառներում։ Յարաբերութիւնները սաստիկ լարված են։ Տեղ տեղ սպասվում են ընդհարումներ։ Ամարասու վանքի վրա Թուրքերը յարձակում գործե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱ-ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—

Պօլսահայ վերջին օրաթերթերը բերում են մեզ մանրամասնութիւնները և տեղեկագիրը Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան, կարդացված Իզմիրեան գրական մրցանակաբաշխութեան կոմիտէի կողմից, յուլիսի 7-ին Թարգմանչաց տօնի մրցանակաբաշխութեան հանդէսին։ Այդ տեղեկագրից երևում է, որ այս տարվայ մրցումին ուղարկված է եղել, զանազան հեղինակների կողմից, 18 լեզուաբանական աշխատութիւններ մեր լեզուի այլ և այլ գաւառաբարբառներին վերաբերող, որոնցից, բացարձակ մի արժանաւորի չը գոյութեան պատճառով, երկրորդական երրորդական մրցանակների են արժանացել 5-ը՝ Թէոդիկի, Զիթճեանի, Բարաղամեանի, Գափամաճեանի և Գորիկեանի աշխատութիւնները, առաջին երկուսը 35-ական օսմանեան ոսկու և վերջինները՝ 30-ական ոսկու մրցանակով։

Նայելով մրցութեան համար աշխատութիւններ ներկայացնողների ցուցակին՝ անմիջապէս աչքի է զարնում այն հանգամանքը, որ, ինչպէս անցեալ տարիները, նոյնպէս և այս տարի, այդ ցանկի մէջ չէ երևում և ոչ մէկը մեր աչքի ընկնող, համբաւված հեղինակներից, և այդ հանգամանքը գալիս է ընթերցողի վրա թողնելու մի տեսակ սառն արհամարհական տպաւորութիւն այդ գրական մրցման գործի վերաբերմամբ, որ կատարվում է Պօլսի պարիարքարանի գերագոյն հսկողութեան ներքոյ։ Թէ ինչո՞ւ—ես դրա մանրամասնութիւնների մէջ մտնել չեմ ուզում. բաւական է միայն աչք ձգել մինչև այժմ վարձատրված գործերի վրա. և ստուգիւ, ինչ են ներկայացնում Գար. Լևոնեանների, Այվազեանների, Խաչիկ Լևոնեանների, Զիթճեանների, Բարաղամեանների, Ռաադէթեանների, Գաբրիկեանների և այլն մրցանակի արժանացած երկասիրութիւնները։ Իսկ ինչ վերաբերում է մրցանակաբաշխութեան կոմիտէի մտադրութեանը՝ ներկայացված ձեռագիր դաւառաբարբառներից և մինչև այժմ լոյս տեսած նմանօրինակ գործերից կազմել հայ գաւառաբարբառների «լիակատար», «ամբողջական» բառարան, և հրատարակութեան տալ ի հաշիւ Սահակ-Մեսրոպեան գրադարանի՝ ներկայումս գոնէ ես գտնում եմ բոլորովին վաղաժամ։

—

1902 թ. հոկտեմբերին վերջնականապէս լուծվեց Կիլիկիոյ կաթողիկոսութեան կնճռոտած խնդիրը, որ այնքան երկար ժամանակ զբաղեցնում էր մեր մամուլի ղեկավարներին, որպէս և այդ սրբավայրի վիճակի բարելաւութեան նախանձախնդիրներին։ Ընտրվեց Թադէոսեան սրբազանը, որ Երիցեան սրբազանի նման չը խրտնեց, այլ յանձն առաւ գնալ այդ ոչ այնքան հրապուրիչ պաշտօնավայրը, աւերակ դարձած Սսոյ աթոռը։ Պօլսահայ մամուլը միաձայնակամ գրաղվեցաւ, ողջունվեց Սսով և իր նոր վեհապետով այդ ընտրութիւնների առիթով։ Անցաւ մի ժամանակ և երկուսն էլ մոռացվեցան. բայց Կիլիկիոյ աթոռի գահակալը չը թողեց իր անձը երկար մոռացութեան մէջ, առիթը ներկայանալուն պէս իր վեհապետի հրաւէրով անցեալ տարի Պօլիս եկաւ, իր որդիական խոնարհ հպատակութեան հաւատքները դնելու վեհափառ սուլթանի գահոյից ոտների առաջ։ Եւ գնահատվեցաւ. վեհապետը պատուիրեց նրան «մնալ իր հօտի հետ միասին խոնարհ և հնազանդ այնպէս, որպէս Պօլսի հայ փաթրիքն է». և Կաթուղիկոսը խոստացաւ և գնաց, այն էլ այնպիսի մի ժամանակ երբ այն կողմն Անտոքի բարձրութիւնների վրա իր հեռաւոր հօտի ոչխարների մի մասը անհնազանդութեան, ըմբոստութեան թուչկոտումներ էին անում։

Պօլսում զանազան հարուստներ խոստումներ արին նուիրաբերութիւններ անելու հայ մայրավանքին. մէկը վեհարանի կտուրը նորոգել խոստացաւ, միւսը՝ խոհանոցն ու մառանը, երրորդը՝ Ժառանգաւորաց վարժարանին մի դուռար խոստացաւ, չորրորդը՝ վարժարանին մի շէնք. բայց խոստումները չիրագործվեցան և Կիլիկիայի կաթողիկոսի վիճակի համար ամենակարևորը՝ բարոյական կողմը անխնամ, պակաս մնաց։

Կիլիկիոյ թեմը այնքան էլ անկարող չէ պահպանելու իրան վայել դիրքում, վիճակում մի կաթուղիկոսական աթոռ, որը պահպանվել է ձախորդութեան և փոթորիկների մէջ այսքան դարերից ի վեր, բայց կայ մի հանգամանք, որ սպառում է և հիւծում վանքի տնտեսական ոյժերը, դա այն շատ վատ սովորութիւնն է, որով վախճանված միաբանների սահմանները՝ դրամ կամ կալուած՝ անցնում են իր ազգականներին, որպէս ժառանգութիւն։ Մի տաճկահայ հոգևորական վախճանվեց թէ չէ, մէկ էլ տեսնես ազգականները թափվեցին չորս կողմից՝ իրանց բաժինը պահանջելու և որ իրաւական հիմունքով։ Հոգևորականը, իր կոչումն ստանալու, աշխարհից կտրվելուց յետոյ, պատկանում է ոչ թէ իր եղբօր որդիներին, իր եղբօր հարսներին, այլ ամբողջ ազգին, և նրա ամբողջ, ամբարած կամ չամբարած հարստութիւնը վերաբերում է ոչ թէ նրանց՝ այլ ազգին, աւելի ճիշդ այն ուխտին, կամ հոգևոր հաստատութեան, որին պատկանելիս է եղել հանգուցեալ կղերը։ Սրանից հիշդ տասը տարի առաջ էր, երբ վախճանվեց Սսի աթոռի նախորդ գահակալ՝ Մկրտիչ Քէչիշիզեանը։ Նրա թողած կարողութիւնը մինչև այժմ էլ խնդրի տակ է, և ներկայ կաթողիկոսը մինչև այժմ էլ զբաղված է նրա ժառանգութեան խնդրով։ Զենք հասկանում թէ Կիլիկիոյ շրջանի աղքատ ժողովրդից նուիրաբերված կոպէկներից և վիճակի եկեղեցական կալուածներից հաւաքված կարողութիւնը ինչո՞ւ չը պէտք է մնայ նոյն աթոռին, այլ կաթողիկոսի ինչ որ հեռաւոր կամ մերձաւոր ազգականին։ Ինչու պէտք է մի Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանի թողած ժառանգութեան կարևոր մասը բաժանվի իր բազմաթիւ եղբայրներին, և մնացած մի չնչին գումարով ազգը տասնեակ տարիներ սպասի, որպէս զի կարողանայ նրա բերած տոկոսի բարդվածը կտակված հիւանդանոցը ունենալ։ Պէտք է որոշել, սահմանել միանգամ ընդմիշտ այդ բանը, ազատվում նմանօրինակ դժուարութիւններից խուսափել կարողանալու համար։

—

Աղթամարի կաթողիկոսական աթոռն էլ մինչև այժմ էլ մնում է թափուր. հանգուցեալ վերջին Եպիսկոպոսը կաթողիկոսի տեղակալ Աբսէն վարդապետը զոհ գնաց վերջերս իր ոչ-օրինակելի ընթացքի համար։ Ե-

ցին։ Պարսկական թուրքերը Երասխի միւս ափում թակարդ սարքեցին գիւղերի վրայարձակվելու համար։ Այստեղ թէ հայերը և թէ թուրքերը ամեն տեսակ միջոցներ ձեռք են առնում ընդհարումների առաջն առնելու համար գիւղերում։ Զօրքի օգնութիւնը անհրաժեշտ է։ Քաղաքի վնասված բնակիչների համար խնդրում եմ նիւթական միջոցներ, որոնք ընդունելու համար հաստատված է յանձնաժողով, որը պէտք է հոգայ վնասվածների կարիքները։ Մի խօսքով նիւթական օգնութիւնն անհրաժեշտ է։

Թեմական առաջնորդ՝ Ներս եպիսկոպոս

—

Բագուից հեռագրում են «Кавказъ»-ին օգոստոսի 20-ից.

«Վիրաւորված է III մասի պրիստաւ իշխան Նիժէրաձէն։ Սպանվածների մեծ մասը ռուսներ և մահմեդականներ են»։— Հեռագրին այնպիսի ձև է տուած, որ կարծես ռուս և մահմեդական մի կողմ են կռնգնած եղել, իսկ հայերը միւս կողմը։ Բարեխղճութիւնը պակասում է։

—

Ստացանք հետևեալ հեռագիրները.

Բագու, 22 օգ. 3 ժամ 54 ր. ցերեկվայ

«Օգոստոսի 22-ին սկսվեցին անկարգութիւններ, որոնց պատճառները դեռ ևս անյայտ են։ Գիներալ-նահանգապետի ձեռք առած եռանդուն միջոցների շնորհով կոտորածը շատ ընդարձակ չափեր չը ստացաւ։ Սպանվածների մօտաւոր թիւն է—հայեր—10 հոգի, թուրքեր—50—60 հոգի։ Գիշերը զօրքերն ունեցան ընդհարում թուրքերի հետ։ Այս առաւօտ անկարգութիւններն սկսվեցին Բալախանում»։

—

Սեւ-Քաղաք, 22 օգ., ժ. 12 և 16 ր. ցերեկ.

«Քաղաքում համեմատաբար աւելի խաղաղ է։ Մասնակի սպանութիւնները շարունակվում են։ Գիւղերից քաղաքի վրա եկող 3000 զինված թուրքերի մասին լուրը չէ ստուգվում։ Առ այժմ սպանված են 270 թուրք, 130 հոգի հայ, ռուս, վրացի և այլ ազգութիւններից։ Բալախանում այս գիշերվանից սկսվել են սպանութիւններ ու անկարգութիւններ և դեռ շարունակվում են։ Տրամադրութիւնը ծայրայեղ լարված է»։

Ալիբեկեան

—

Բագուից երէկ, օգոստոսի 23, երեկոյեան վեց և կէս ժամին ստացանք հետևեալ հեռագիրը.

«Այսօրվայ հայ-թուրքական խորհրդակցութեան մէջ հայերն առաջարկեցին փոխադարձ նիւթական համերաշխութիւն ջարդերի և սպանութիւնների համար։ Մահմեդականները խոստացան պատասխանել վաղը։ Նաւթահանքերում, սակաւ բացառութեամբ, ոչնչացրված է ամեն ինչ։ Զօրքեր քիչ կան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԳՈՅՔԵՐ

—

Կովկասեան Փոխարքայի հրատարակած «Ժամանակաւոր կանոնները» հայ-լուսաւորչական գոյքերի կառավարութեան մասին միմեանցից տարբերում է սեփականութիւնների երեք տեսակներ՝

ա) Եկեղեցիներին պատկանող գոյքեր.

բ) Հոգևոր սեմինարիաներին պատկանող և

գ) Վանքապատկան գոյքեր։

Սրանցից առաջինների կառավարութիւնը յանձնվում է ծխական հոգաբարձութիւններին։

Հոգևոր սեմինարիաների կալուածների կառավարութիւնը գանվելու է թեմական հոգաբարձական խորհրդի ձեռքում։ Մնում է երրորդը՝ վանքապատկան կալուածները, որոնք, որքան մեզ յայտնի են, հայ եկեղեցական կալուածների ամենախոշոր և արժէքաւոր մասն են կազմում, և յայտնի է էջմիածնապատկան կալուածներ անուան տակ։ Դրանց մասին նոյն կանոնները ասում են հետևեալը՝

1) Վանքապատկան գոյքերի կառավարութիւնը յանձնվում է վանական իշխանութեան։

2) Վանական գոյքերի կառավարութեան կանոնաւորութեան վրա հսկելու համար կարող են հրաւիրվել թեմական առաջնորդների կողմից և աշխարհական անձինք՝ օգնելու վանական իշխանութեան։

Ուրիշ խօսքով՝ այն ինչ եկեղեցական և դպրոցական գոյքերի կառավարութիւնը ըստ կանոնների յանձնվում է բացառապէս աշխարհական անձանց, վանական կալուածների կառավարութեան մէջ աշխարհականների մասնակցութիւնը պարտադիր չէ. այդպիսիներ կարող են միայն հրաւիրվել թեմական առաջնորդի կողմից. հետևապէս թեմական առաջնորդները կարող են և չը հրաւիրել աշխարհականների և այդպիսով վանական կալուածների կառավարութիւնը կարող է մնալ գլխովին հոգևորական անձանց հսկողութեան և անմիջական կառավարչութեան տակ։

Անկասկած է այստեղ մի բան—կանոնները այս խնդրում յարգելով մեր հոգևոր իշխանութեան իրաւասութիւնը, վանական կալուածների կառավարութեան եղանակը թողել են հայ հոգևորականութեան տակտին—մի և նոյն ժամանակ կողմնակի կերպով ցոյց են տուել, որ հոգևորականութիւնը այս դէպքում էլ առանց գլասի կարող է օգտվել աշխարհական անձանց անմիջական աջակցութիւնից։

Մարմնական իշխանութեան այսպիսի ուշադիր վերաբերմունքը դէպի մեր հոգևորականութեան իրաւունքը արժանի է մեր բոլորիս շնորհակալութեանը։ Մեզ համար միւս կողմից թանգ է նաև նրա կողմնակի ցուցմունքը՝ աշխարհական անձանց վրա, որով այդ կանոնները մատնացոյց են անում վանական գոյքերի կառավարութեան խնդրում օգտվել աշխարհական անձանց գիտութիւնից և փորձառութիւնից։

Թողնենք վանական գոյքերի կառավարութեան եղանակի խնդիրը այնպէս, ինչպէս որ դա ցոյց է տուած «Ժամանակաւոր կանոնների» մէջ, անցնենք գործնականին։

Ճանկալի և օգտաւէտ է արդեօք աշխարհական անձանց մասնակցութիւնը վանական գոյքերի կառավարութեան խնդրում։

Այս հարցին կարելի է միայն պատասխանել՝ ոչ միայն ցանկալի և օգտաւէտ է, այլ նոյն իսկ անհրաժեշտ է, որպէսզի կալուածների կառավարութեան մէջ մտնեն նաև աշխարհական անձինք։

Ահա թէ ինչու։

Մեր վանքապատկան կալուածները մեծ մասամբ ոչ այլ ինչ են, եթէ ոչ գիւղեր, վարելահողեր, այգիներ, անտառներ, արօտատեղիներ, խոտհարքներ և այլ տեսակի կալուածներ, որոնք անպայման գիւղատնտեսական գոյքերի (сельскохозяйственныя угодья) բնաւորութիւն ունեն և որպէս այդպիսիներ պահանջում են խելացի, (բացիօնալ) կանոնաւոր վարչութիւն և շահագործում։ Անցան այն ժամանակները, երբ կալուածների վրա հսկում էին զանազան վահիրներ, պրիկազչիկներ, նախկին պոլիցիական ծառայողներ, որոնց արժանիքը նրանումն է կայանում, որ բարձր, խռպոտ, հրամայական ձայն ունէին, ամուր մտրակներ, աղա կամ բէգ տիտղոսներ։ Անցաւ ոյժի ժամանակը, որը, դժբաղդաբար, մեզնում երկար, շատ երկար տևեց. այժմ օրինականութեան և գիտութեան դարն է։ Ինչպէս որ խելագարութիւն կը լինի դրպրոց ուսուցչութեան ուղարկել մի դերձակի, որմնադրի կամ ներկարարի, նոյնպիսի խելագարութիւն է, եթէ մենք կալուած, անտառ, այգի ուղարկենք մի վարպետի, կանցելարիայի չինովնիկի, թաւնչի և այլն։ Գիւղատնտեսական գործի գլխին այժմ պէտք է կանգնած լինի մասնագէտ, այգու վրա՝—այգեգործ—գինեգործ. անտառապահութեան և արօտատեղիների վրա պէտք է հսկէ և կառավարէ—մասնագէտ, անտառապահ—կաթնատնտեսը նոյնպէս, որպէս դպրոցում—մանկավարժը, գործարանում՝ ինժիներ քիմիկոսը կամ մեքենայագէտը և այլն։

Առաջ, շատ առաջ, երբ մասնագէտներ չը կային կամ թէ կային շատ սահմանափակ թըւով—կամայ թէ ակամա, հաշտվում էինք զանազան աննօրմալ դրութեան հետ, երբ շարակնագէտ վարդապետը գիւղատնտես էր, անտառապետ էր, երբ կօնսիստորիայի ծառայողը վարդապետ էր։ Այժմ փառք աստծու, հնդապարակի վրա կան ամեն տեսակի մասնագէտներ. չօգտվենք դրանց գիտութիւնից, դրանց ոյժերից—կը նշանակէ մնալ վայրենի, տգէտ։

Էջմիածինը, ճիշդն ասած, մեր հոգևոր բարձր իշխանութիւնը վերջին քսան տարիների ընթացքում մի քանի անգամ փորձեր է արել իր կալուածական տնտեսութեան մէջ բարեփոխութիւններ մտցնելու. զանազան ժամանակներում էջմիածին են հրաւիրվել մասնագէտ գիւղատնտեսներ, բայց այդ բոլոր փորձերը ոչ մի դրական հետևանք չեն տուել, այն պատճառով, որ այդ փորձերը եղել են շատ թոյլ, վախկոտ, անվստահ, անսիստեմ։ Հրաւիրվում են մասնագէտներ և դրանց դնում են այնպիսի անտանելի պայմանների մէջ, որ գործել, բան անել անկարելի է լինում։

Ութասունական և ինսունական թւականներում էջմիածին եկել և գնացել են տասնեակ մասնագէտներ և մնալով էջմիածնում մի տարի, վեց, երեք, երկու մինչև անգամ մի ամիս դժգոհ գոյութիւն ունեցող կարգերից՝ հեռացել են, կրկնելով՝ թէ ներկայ պայմաններում էջմիածնում գործել անհնարին է։

Եթէ մենք սկսէինք այստեղ մանրամասն բացատրել այդ պայմանների էութիւնը, դա մեզ շատ հեռու կը տանէր. մենք միայն կը տանք մի քանի անուններ՝ Խան-Աղեան, Գեօզալեան, Միրզոյեան, Մեծատուրեան, Աթանասեան, Շերմազանեան, Շահրազեան, Մակարեան, Ղազարոսեան և այլն և այլն, բոլորը մասնագէտներ. և՝ այդ բոլորը եղել են էջմիածնում 18 տարիների ընթացքում և շատերել են հեռանալ—առանց էջմիածնին շոշափելի օգուտ տալու։

Այո, էջմիածինը ցանկացել է իր անտեսակցութեանը կանոնաւորել, սակայն այդ ցանկութիւնը եղել է այնքան թոյլ, այնքան պլատոնական և մի և նոյն ժամանակ այնքան անսիստեմ, որ իր այդ քայլերով նա միայն մի բան է ապացուցել, այն՝ թէ ինչպէս չը պէտք է բարեփոխութիւններ մտցնել։

Բայց յուսանք, որ դրանք անցեալումն էին. յուսանք, որ այսուհետև էջմիածինը իր դառն և ծանր փորձերից յետոյ կը դայ այն համոզմանը, որ այնպէս կառավարել և շահագործել իր ընդարձակ, արժէքաւոր կալուածները և գոյքերը անկարելի է, որ անհրաժեշտ է մի արմատական բեֆօրմ իր տնտեսական կեանքի մէջ։

Եւ այսօր Փոխարքայի հրատարակած ժամանակաւոր կանոնները գալիս են մեզ օգնելու այդ խնդրում։

Թեմական առաջնորդներին առաջարկվում է «գոյքերի կառավարութեան կանոնաւորութեան վրա հսկելու և վանական իշխանութեանը օգնելու համար թեմական առաջնորդ-

---

ռևակայեցէք, որ կաթողիկոսական այդ ընդարձակ և բազմահայ թեմը, որ պարփակում է Գաւառ-Կարճկան, Մոկս, Շատախ, Խիզան, Ցարկառ և այլ գաւառները՝ մի տասնեակ տարիներից ի վեր յանձնված, վստահացված էր եղել Արսէն վարդապետի նման մի տգէտ, ապիկար հոգևորականի, որ կոչված է եղել իր նախորդ կաթողիկոսի ձեռքով «ի հորթաբածութենէ ի վարդապետութիւն»։ Աղթամարի թեմը և աթոռը մինչև այսօր մնացած է եղել առանց դահակալ կաթողիկոսի, այն էլ ներկայ ծանր հանգամանքներում, և այդ բանը Պոլսի պատրիարքարանի ուշադրութեան արժանանալու բաղդ չէ ունեցել երբևիցէ։ Այժմ մանաւանդ, երբ կաթողիկոսական տեղապահն էլ չը կայ մէջտեղը, և աթոռի պահպանութեան համար մնացել է միայն ծերունազարդ Յովսէփ եպիսկոպոսը, որ իր դարն անց է կացրել արդէն՝ ժամանակ է մտածել Աղթամարի կաթողիկոսութեան ընտրութեան մասին, ուղարկելով այնտեղ խելքը գլխին մի եպիսկոպոս, որ կարողանայ դարմանել այն անկերպարան դրութիւնը և չարիքը, որ տարիներից ի վեր կուտակված է Աղթամարի աթոռի և իր ընդարձակ թեմի գլխին, առաջնորդելով նրան կորուստի, քայքայման անդունդը։

Վերջին օրերումս առաջնորդական տեղափոխութիւններ են, որ լինում են տաճկահայ առաջնորդական վիճակներում. Պէլէճիկի առաջնորդ Մովսէս եպիսկոպոս Կէօմրիւֆճեանը (կաթողիկոսական պատուիրակ Խապայեանի ընտրութեան ժամանակ) հրաժարվելով՝ տեղը նշանակված է Թաթուլ վարդապետ Դուրեանը. Նիկոմիդիից առաջնորդական տեղապահ՝ Կարապետ ծ. վ. Մազլումեանը նշանակվել է Բէօթահիայի, Կորիւն վարդ. Էլլիդրէմեանը՝ Մշու վիճակի, Կորիւն վարդ. Եսայեանը՝ Դիարբէքիրի, և Եղիշէ վարդ. Բաղէշի վիճակի համար (առժամանակվայ)։ Միւս կողմից էլ հետաքրքիր է Սամսոնի յաջորդ Աշոտ եպիսկոպոսի և Ռոդոստոյի փոխանորդ Վահրիճ վարդապետի ընդհարումները և թիւրիմացութիւնները իրանց վիճակի գաւառային վարչութիւնների հետ. ցաւալի են անշուշտ այդ դժգոհութիւնները, որի բնական հետևանքը կարող է լինել միայն առաջնորդական ապահարզան։

Վահրիճ վարդապետը, մանաւանդ որ սրանից դեռ հազիւ մի տարի առաջ այնքան տարօրինակ խանդավառութեամբ ընտրվեց Ռոդոստոյի համար, դեռ տարին չը լրացած ստիպված է լինում թողնել իր թեմը. նոյնօրինակ անհամաձայնութիւններով նոյն վարդապետը հեռացել է, դեռ սրանից առաջ, Վանից, ինչպէս և Քղեից։

Վան գնալու համար ձմեռվայ ընթացքում այնքան սրտեռանդ պատրաստակամութիւն յայտնող Վանքեան Արիստակէս եպիսկոպոսը—Զամչեանի ձեռնասուն—դարունը բացվելուն՝ յետ է առել իր որոշումը. այս առթիւ ամենայարմար բարեմաղթութիւնն է ասել վանեցիներին «կրունկը ձեր կողմը»։ Ճանիկեան քահանան էլ բաւական է ձեզ համար։

Եգիպտահայ գաղութի համար նոր առաջնորդ է ընտրվել Մկրտիչ վարդ. Աղաւնունին. Պոլսից վերջերս փախած Եղնիկ եպիսկոպոս Ապահունու առաջնորդական կանդիդատութիւնը սնացել է, ինչպէս երևում է։

—

Քննութիւնների սիստեմը, որ այնքան խըստիւ հարուածվում է նորագոյն մանկավարժութիւնից, թիւրքահայ վարժարաններում դեռ չէ վերացել. սեղմն սկսվել է և Պոլսահայ թերթերը խօսում են մանրամասնօրէն այդ կատարվող քննութիւնների մասին։ Կարնի Սանասարեան վարժարանը, որ իր երեք յատիտենական տեսուչների ձեռքի տակ այնքան կարևոր արդիւնք չէ տուել, որքան խօսել է տուել իր մասին՝ տուել է այս տարի 15 շրջանաւարտ ուսումնական և 3-ը արհեստագիտական բաժիններից, Պոլսի հայ բուրժուաների՝ Բէրբէրեան վարժարանը տուել է 16 ընթացաւարտ, որոնք, դեռ քննութիւնները չաւարտած, պատրաստել են արդէն իրանց չարչու դուքանները Պոլսի խանների ամենաբանուկ անկիւններում։ Կեսարիայի ս. Կարապետ վանքի «Բարձրագոյն» վարժարանը՝—որի նորակառոյց փառաւոր շէնութիւնը աւարտվեց սրանից երեք տարի առաջ վիճակին առաջնորդ Պալեան Տրդատ եպիսկոպոսի ձեռքով—9 շրջանաւարտ։ Աբեղայի դպրավանքի այս տարվայ սանիկներից վարդապետական աստիճան են ընդունել չորս հոգի՝ Տէր-Պարգև, Տէր-Շաւարշ, Տէր-Գասակ և Տէր-Շահէ անուանափոխութեամբ, որպէս զի կարողանան աւելի լաւ ծառայել ազգին։ Եղիշէ եպիսկոպոս Դաւթեանը, դպրեվանքի նախկին վանահայրը, Իզմիրից՝ իր առաջնորդական վիճակից յատկապէս եկել էր իր սանիկներին իր ձեռքով հոգևորական կոչումն ընծայելու, մէկ էլ ցոյց տալու, որ ինքը բոլորովին չէ լքել իր սիրած դպրեվանքը և պատրաստ է այցելելու ամեն անգամ, երբ վարդապետական ձեռնադրութիւններ կը լինեն։ Սարկաւագութեան աստիճան են ընդունել և ուրիշները դպրեվանքի երրորդ դասարանի սանիկներից։

—

Ֆրանսերէնից—հայերէն ընդարձակ բառարանի կազմող և Լաֆոնթէնի առակների թարգմանիչ Մեսրոպ Նուբարեանը Իզմիրում ձեռնարկել է Մոլիէռի կօմէդիաների ամբողջական թարգմանութեան. վերջերս լոյս է տեսել այդ թարգմանութեան Ա. հատորը «Կատակերգք Մոլիէռի» վերնագրի տակ, որ բովանդակում է Մոլիէռի կատակերգութիւններից ութը և արժէ 30 դահեկան. երկրորդ հատորը լոյս տեսնելիս միատեղ կարժենան 54 դրուշ։ Օրինակը դարձեալ թիւրքահայերից է գալիս. Մասեհեանի Շէքսպիրի թարգմանութիւնը, մինչև այժմ էլ մնում է չամբողջացրած գործ։

—

Վանայ Երամեան անհատական վարժարանի գոյութեան 25-ամեակը լրացել էր դեռ սրանից երեք տարի առաջ, որ սակայն յետաձգվելով ամեն տարի մնացել է մինչև այսօր, որպէս զի յօբելեարը կարողանայ շատ դրամական նուէրներ ստանալ, տաճկահայոց բառով՝ կորզել այս ու այն տեղերից։ Պոլսի թերթերը տեղեկացնում են, որ Վանից յօբելեարը խնդրել է վերջերս պատրիարքարանից, որ այս տարի էլ յետաձգեն մինչև սեպտեմբերը, որպէս զի մի քիչ էլ երկար լինի մուրացկանութիւն անելու համար, և պատրիարքարանը, որ մարդու խաթը կոտրել չը գիտէ, մանաւանդ Երամեանի, հեռագրով կատարել է այդ ցանկութիւնը։ Ճիշդ տեղն է բանաստեղծի հետ կրկնելու համար, «մեր յօբելեանն է մուրացկի հանդէս»։

Ռատանիկ

գները կարող են հրաւիրել և աշխարհական անձինք»։

Մենք համոզված ենք, որ մեր հոգևոր բարձր իշխանութիւնը, որին «յանձնվում է վանքական գոյքերի կառավարութիւնը, նոյն իսկ այն դէպքում, եթէ այդ կանոնների մէջ չը լինէին ցուցմունքներ աշխարհականների մասնակցութիւնը և գործակցութիւնը կալուածների կառավարութեան հարցում անհրաժեշտ կը համարէր և այդպիսով նա ինքնաբերաբար ուղղած կը լինէր նախկին տարբերների սխալները, որով մի կողմից կը բարձրացվէր իր հեղինակութիւնը ժողովրդի մէջ, մեւ կողմից կալուածների կանոնաւոր շահագործութեան և կառավարութեան գործը կը դնէր ճշմարիտ առաջադիմութեան ուղիղ ճանապարհի վրա—մի բան որ բոլորիս անկեղծ ցանկութիւնն է։

Իսկ թէ ինչպէս կազմակերպել այդ գործը—դրան կանցնենք մի ուրիշ յօդուածում։

Գիւղատնտես Ա. Աթանասեան

ԻՆՉ ԱՆԵԼ

—

Դարձեալ հոսում է արիւնը։

Բաքուի, Նախիջևանի և Երևանի գաւառներում արիւնի կարմիր փոթորիկը կարծես քաւական չէր։

Ահա և Շուշին, և Բաքուն և ուրիշ տեղեր։

Փոխարքայի խաղաղութեան կոչից յետոյ, մարդ մղվում էր մտածելու, որ մահմեդական ամբոխը այլ ևս չի համարձակվի ոտնակոխ անել Կովկասի բարձրագոյն իշխանաւորի կամքը, չի խանգարի այնքան ցանկալի խաղաղութիւնը։ Բայց, ինչպէս երևում է, մահմեդական ղեկավարների մէջ յուզումը շատ խորն է, ատելութիւնը՝ դէպի հայ տարրը շատ սաստիկ։ Այնպէս որ այդ ոճրագործ յուզման, այդ եղեռնական ատելութեան սանձ դնելու համար կոչերն ու յորդորները անզօր են, բացարձակապէս անզօր։

Ո՛վ քիչ ու շատ ծանօթ է ասիական ամբոխի հոգեբանութեան, նա վստահ է, որ խօսքը ապարդիւն է, գործ է հարկաւոր։

Տգէտ ամբոխների, արիւնի ծարաւից տանջվող խուժանների վրա միայն ուժը կարող է ազդել։

Այդ շատ լաւ գիտէ պարսիկ իշխանութիւնը, իր ամենօրեայ փորձառութեամբ։ Նոյն խռովարարներն ու գրգռիչները, ինչպէս յայտնի է, ջանացին մի և նոյն ժուռ խաղը խաղալ և Ատրպատականի գաւառում։

Բայց ո՞ւր։

Պարսիկ կառավարութիւնը՝ իր կարուկ միջոցներով առաջին բոպէից իսկ խռովութիւնները խեղդեց իր սաղմի մէջ։

Եւ Ատրպատականը ազատվեց արիւնի փոթորիկից։

Ալեկոծվող թուրք ամբոխը հանդարտեցնելու, նրան խելքի, առողջ դատողութեան բերելու համար, ուժ, և պատիժ է հարկաւոր։

Եւ այդ միջոցին պէտք է դիմել անմիջապէս, առանց բոպէ կորցնելու, որովհետև խօսքի, յորդորի, կոչի վստահելով որքան երկար թոյլ տրվին մասնաւոր կամ ընդհանուր սպանութիւնները, այնքան դժուար պիտի լինի անկարգութիւնների զսպումը։

Պարագաներից եթէ ոչ բոլորը, գոնէ մեծամասնութիւնը յայտնի էր։ Արդարադատութիւնը մինչև այսօր չը բռնեց նրանց ծայրից։

Նրանք ազատ են, անպատիժ։

Նախիջևանի ընդհանուր նահանգապետը, պրինց Լուի Նապոլէօն գնաց աղէտի վայրը։ տեսաւ ամեն ինչ։ Աւերը մեծ էր, սարսափը տհագին։ Թուրք ամբոխը իր սխրագործութիւններով հպարտ, արհամարհում էր ամեն իշխանութիւն։ Մի տեղ հանդարտվում էր, միւս տեղ սկսվում։ Կոտորված, թալանված հայը՝ դաշտային աշխատանքները զօրքի, կազակի պաշտպանութեան տակ միայն կարողանում էր կատարել։

Ու այս դժոխային պայմաններում իշխան Նապոլէօն հասողվեց, որ թուրք ամբոխի պարագլուխներին կարգի հրաւիրելու, սպանութեան, թալանի ախորժակը մարելու համար հարկաւոր էր ոչ միայն թոյլ չը տալ, որ նոր ոճիրներ գործվեն, այլ և իր նախորդ ոճիրների համար հաշիւ պահանջել։

Ու իշխանը հրամանագրեց, որ 5 օրվայ ընթացքում վերադարձնվեն թալանված, յափշտակված գոյքերը։

Մինչև այսօր այդ հրամանն ևս անգործադրելի է մնացել. նա ևս այն հասողումն է գոյացրել այդ պարագլուխների մէջ, որ կովկասեան իշխանութիւնը անպատիժ պիտի թողնէ ոճրագործ շարժման հեղինակները։ Ու դրա վրա սկսվեց Շուշու ողբերգութիւնը և բանը հասաւ այն տեղը, որ ֆանատիկոսացած խուժանը սպանեց տասը զինուորի։

Ի՞նչ անել։ Կէս միջոցները անզօր են։

Պէտք է ամենախիստ կերպով ճնշել յանցաւոր փորձերը։

Բռնել յանցաւորների օձիքից։

Պահանջել հատուցում վնասների։

Եւ զինել խաղաղ ազգաբնակութիւնը։ Կազմել միլիցիա ռուս սպաների, օֆիցէրների հրամանատարութեան տակ։

Ուրիշ կերպ հրդեհը անկարելի է մարել։

Այդ է հրամայում իրերի դրութիւնը, առողջ տրամաբանութիւնը։

Հակառակ դէպքում վտանգը մեծ է...

Տ. Զաւէն

ԲԱՂՈՒԱԾՆԵՐ «ԱՐԱՐԱՏԻՑ»

—

Էջմիածնի Սինոդը մայիսի 27-ին որոշել է երկու շաբաթվայ ապաշխարութեան ենթարկել Գարեգին քահանայ Առաքելեանցին հայ կաթոլիկի կնքահայրութեամբ երեխայ մկրտելու պատճառով։

Յունիսի 1-ին Սինոդը թոյլատրեց Շամախու Կոնսիստորիային Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունել Դարբանդ քաղաքի բնակիչ Ալլահ-Կուլի-Նաջար-Կուլի օղլուն։

Յունիսի 22-ին Սինոդը լսեց Երևանի շրջանական դատարանի Գրօկուրօրի գրութիւնը յունիսի 8-ից № 306, որի հետ ուղարկելով Թիֆլիսի դատաստանական պալատի վճիռը 1904 թւի սեպտեմբերի 21-ից, խնդրում է Սինոդի անօրինութիւնը երկու ամսվայ ընթացքում կարգալոյծ անելու Կարս քաղաքի երկու քահանաներին՝ Տէր-Առաքել Տէր-Առաքելեանցին և Տէր-Դիոնիսոս Տէր-Մինասեանցին, որոնք զրկված են մի քանի իրաւունքներից և դատապարտված մի ամեայ բանտարկութեան։ Դատաստանական պալատի վճռից երևում է, որ յիշեալ քահանաներն այլոց հետ միասին մեղադրված և դատապարտված են պատժական օրինաց 263-դ. յօդուածի համաձայն։ Հրամայեցին. ուղարկելով վճռի պատճէնը, պատուիրել Երևանի վիճակային կոնսիստորիային կարգալոյծ անել յիշեալ երկու քահանաներին և տեղեկութիւն տալ Սինոդին։

Յունիսի 29-ին Սինոդը լսեց Ներքին Գործոց նախարարութեան օտար դաւանութեանց դէպարտամենտի գրութիւնը յունիսի 13-ին—№ 2886, որով պահանջում էր տեղեկացնել, թէ վերջին հինգ տարվայ ընթացքում տարեկան քանի հոգի են սովորել թեմական դպրոցներում. քանի հոգի են աւարտել իրանց ուսումը լիշեալ ժամանակի ընթացքում. աւարտողներից քանի՞ հոգի են մտել հոգևոր ծառայութեան մէջ յիշեալ հինգ տարիների ընթացքում, սրբազնագործ պաշտօնեաների քանի՞ բաց տեղ է եղել խւրաքանչիւր թեմում և այդ տեղերից քանիսն են բռնվել յիշեալ ժամանակի ընթացքում և մինչև օրս քանի բաց տեղ է մնում։ Սինոդը հրամայեց ուղարկել Ներքին Գործոց Նախարարութեան գրութեան պատճէնը թեմական առաջնորդներին և շուտով ստանալ պահանջված տեղեկութիւնները՝ նախարարութեան մատուցանելու համար։

Յուլիսի 1-ին Սինոդը թոյլատրեց Երևանի կոնսիստորիային Հայաստանեաց Եկեղեցու ծոցն ընդունել Կարսի վիճակի Մազրա գիւղի բնակիչ քուրդ Կիւրեղ ու Սարգիս եղբայրներին։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԱՂԷՏԻ ԶՈՀԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք՝ 1) Բալախանու «Կասպիական ընկ.» ծառայողներից 45 բուբ. 25 կոպ., 2) Օզուրգէթում գտնվող Կուբինսկի պոլկի 2-րդ բատալիոնի հայ զինուորներից հաւաքած 3 ր. 50 կոպ., 3) Նովո-Դուբովկա գիւղից (Կարսի շրջ.) Մ. Շահպարոնեանի ձեռքով հաւաքած 11 բուբ., 4) Անապայի հասարակութիւնից և ամառանոց եկողներից Պող. Տէր-Մինասեանի, Պող քահ. Բեռելեանի և Տիգ. Ստեփանեանի ձեռքով հաւաքած 82 բուբ. 60 կ., 5) Բաքուից մեքենայապետ Մկրտ. Վրդոյեանի ձեռքով հաւաքած 42 բուբ. 18 կ., 6) Բաքուից մի մկրտութեան խնջոյքին Գ. Յակոբեանի միջոցով հաւաքած 24 ր., 7) Արմաւիրի հայ հասարակութիւնից Զաւադ-բէգ Բալուղեանի միջոցով 225 ր. 75 կ., 8) Կրասնովոդսկից Յ. Մեհրաբեանի տված հաւերգից 25 ր., 9) եղբ. Իսպիրեաններից (Վլադիկավկազ) 5 ր., 10) Ստաւրոպոլի հայ մրգավաճառներից սովորական մատաղի փոխարէն Պող. Հայրապետեանի միջոցով 8 ր., 11) Խարկովի հասարակ դասակարգից Կարապետ Պ. Բաղէշցեանցի ձեռքով հաւաքած 16 ր., 12) Խարկովից Խ. Պալասանեանի միջոցով հաւաքած 41 ր. 13) Բիբի-Էյբաթից «Թիֆլիսի նաւթարդ. ընկ.» ծառայողներից 45 ր., 14) Սև քաղաքից Դ. Խաչիկեանի ձեռքով հաւաքած 10 ր., 15) Կոկանդի հասարակութիւնից Մ. Զ. Սալամբէկեանի ձեռքով հաւաքած 88 ր. 15 կ., 16) Պ. Սախավեանից (Ռոստով) 2 ր., 17) Եկատերինոդարից Խ. Զոլթեանի ձեռքով հաւաքած 7 ր., 18) Միհրան Մարիմեանից (Բաքու) 5 ր., 10) Ճիպուտի (Ֆրանսիա) հայ գաղութից հաւաքած 60 ր., 20) Բալախանից Միրզայեանի նաւթարդիւնաբերակ. ընկ. ծառայողների շրջանում հաւաքած 28 ր.։ Ընդհանուր գումարը, նախկին ստացածների հետ միասին 25,186 ր. 62 կոպ.։

ԹԻՖԼԻՍ—ԼՕԴԶ—ԲԵՐԼԻՆ

—

Գերմանիայի մայրաքաղաքի՝ Բերլինի դատարանի քրէական բաժնում, շուտով կը քննվի հետևեալ գործը, ինչպէս հաղորդում է գերմանական «Berl. Tageblatt» օրաթերթը։

Անցեալ տարի աշնանը, Թիֆլիսի պետական բանկի բաժանմունքից իբր թէ գողացվել էր մի անյայտ անձի ձեռքով մօտ 50,000 ռուբլի պետական արժէքաւոր թղթեր, որոնց վրա դեռ ևս չը կար պատշաճաւոր ստորագրութիւն։ Բանկի վարչութիւնը, ինչպէս երևում է, ժամանակին նպատակայարմար կարգադրութիւն և յայտարարութիւն էր արել կատարված դէպքի մասին և հաւանօրէն դրան պէտք է վերագրել այն հանգամանքը, որ գողացված գումարը գործադրութիւն չը գտաւ Ռուսաստանի ներսում և վերոյիշեալ արժէքաւոր թղթերի հետքը երևան եկաւ արտասահմանում՝ գլխաւորապէս Գերմանիայում, ուր այդ հետքը խկոյն և եթ պարզվեց գերմանական մի բանկի շնորհիւ։

Մուրադով անունով մի երիտասարդ, սև մազերով և գեղեցիկ արտաքինով, Բերլինի «Մետրոպոլ» թատրոնում ծանօթացաւ մի օրիորդի հետ և այդ նոյն օրվայ գիշերը նրա հետ միասին սարքից աթենական գիշեր։ Երկուսն էլ լողում էին շամպանիայի մէջ... Միմեանցից բաժանվելուց յետոյ գերմանուհին երիտասարդից ստացաւ մի գումար իբրև վարձատրութիւն, ի միջի այլոց և այդ արժէքաւոր թղթերից մէկը իբրև ընծայ։ Մի քանի օրից յետոյ գերմանուհին ռուսական այդ թուղթը տարաւ Բերլինի բանկերից մէկում գերմանական փողով փոխելու և բացվեց գաղտնիքը։ Բերլինի բանկը ճանաչեց այդ թղթի կեղծ ստորագրութիւնը և մանրամասն հարցուփորձի ենթարկեց գերմանուհուն։ Գերմանուհին խոստովանեց, որ ինքը այդ թուղթ փողը ընծայ է ստացել Լոդզ քաղաքի մի հարուստ կալուածատէրի որդի Մուրադովից։ Բանկը եղելութեան մասին հաղորդեց Բերլինի ոստիկանութեանը, որին աջողվեց խկոյն և եթ վերոյիշեալ Մուրադովին ձերբակալելու։ Դատարանական դատախազի մօտ այդ Մուրադովը ասաց, որ ինքն էլ այդ փողը ստացել է մէկ ռուս երիտասարդից, որի հետ նա պատահմամբ ծանօթացել է Բերլինի «Central Hotel»-ում։

Այդ քննութիւնը կատարելուց յետոյ, դատախազը հեռագրական տեղեկութիւններ է ստանում Մուրադովի մասին, որոնք արդարև պարզում են, որ Մուրադովի տուած այն տեղեկութիւնը, որ իբր թէ ինքը հարուստ կալուածատէրի որդի է, ճիշտ է։

Գերմանական դատարանին հաւանօրէն կը յաջողվի ճշմարտութիւնը շուտով երևան հանել և պարզել Թիֆլիսի համար այդ հետաքրքիր գործը։

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Օգոստոսի 18-ին

Հազիւ մի ամիս տևող խաղաղութիւնը նորից խախտվեց։ Նորից լարվեցին հայ-թրքական յարաբերութիւնները, նորից յուզվեցին մարքերը, նորից երկիւղ ու փոխադարձ անվստահութիւն։ Այս անգամ սկզբնապատճառը Ղարաբաղի դէպքերն եղան։ Սա արդէն իր հերթին երրորդ տեղն է բռնում։

Դեռ ևս սրանից մի շաբաթ առաջ, երբ Շուշում մի լապտերավառի էին սպանել, այստեղ բնականաբար, և մասամբ խռովայոյզ մարդկանց ազդեցութեամբ լուր եկաւ, որ Շուշում սարսափելի կոտորած կայ, որ այնտեղ հայերը թուրքերի կանայք են փախցրել, մի քանիսին էլ կոտորել։ Այդ լուրերը ի նկատի ունենալով, տեղիս մի քանի թուրք և հայ ազդեցիկ մարդիկ հաւաքվեցին առևտրական քարվանսարայում և վճռեցին հեռագիր ուղարկել Շուշի ճշդութիւնը իմանալու և միւս կողմից խաղաղութիւն յորդորելու, շեշտելով այստեղի բնակիչների համերաշխութիւնը։ Ապա այդ խումբը, որ այստեղի խաղաղարար կօմիսիան է հաշվում, հաւաքվեց գաւառապետի մօտ խորհրդակցելու օրվայ չարիքի մասին։

Ճշտապահ լինելու համար պէտք է նկատել, որ այս անգամ էլ յուզմունքները գլխաւորապէս շիաների մէջ է, որոնց թիւը համեմատած սիւնիների հետ ճնշող փոքրամասնութիւն է կազմում (300—400 տուն ընդդէմ 4000 տուն սիւնիների. իսկ հայերի թիւը մօտ 800 տուն է)։ Սա երրորդ անգամն է, որ սիւնիները զեմնստրատիվ կերպով իրանց անհամաձայնութիւնն են արտայայտում որ և է կերպ աջակցելու իրանց աղանդակիցների արշաւանքին, որոնք ժենակ չեն վստահանում որ և է քայլ անելու։ Բայց կան մարդիկ, որոնք օրն ի բուն տքնում են սիւնիներին համաձայնութեան բերել, և ահա դրանք, այդ ուղղությամբ պրոպագանդի համար սկսեցին նեթ ծառայացնել Կ. Պոլսից եկած հեռագրական լուրը, որ հայերը կրակել են երկու մզկիթ։ Դրանով դրութիւնն աւելի լրջանում է։ Այսօր ահա երրորդ օրն է, որ քաղաքում «փսփսոց» կայ։ Հայերի մեծամասնութիւնը դեռ չէ կասկածում, որ սիւնիները կը փոխեն իրանց բռնած դիրքը։

Բարեբախտաբար պէտք է նկատել, որ մինչև այսօր բոլոր յուզմունքները մնացել են լոկ որպէս խօսք և աչքի ընկնող դէպք տեղի չէ ունեցել, որ երկու ազգերի թշնամական յարաբերութիւնն արտայայտէր։ Բայց այսօր առաւօտեան, դժբախտաբար, այդ էլ տեղի ունեցաւ։

Նորերս մահմեդականութիւն ընդունած մի հայ, ոմն Իշխանեան, այսօր գնում է Տէր-Դէրդեանների գործարանը տեղ ճարելու։ Գործակատարներից մէկը դրան մերժում է և մի թիւրիմացութեան պատճառով, ներկայ եղողների ասելով, հայհոյում է կրօնափոխի նոր հաւատը։ Լուրը խկոյն տարածվում է գործարանի բանւորների մէջ, որոնք գլխաւորապէս շիաներ են։ Նրանք խկոյն դադարեցնում են աշխատանքը և սկսում են բողոքել այդ սրբապղծութեան դէմ։ Այսպիսի ժամանակ զարմանալի կերպով հարվում են պատրուակներ։ Եւ դուցէ մեծ բարդութիւններ առաջանային։ Բայց շուտով յուզմունքի տեղն են հասնում ազդեցիկ թուրքեր, գլխաւորապէս սիւնիներից, և վերջ տալիս թիւրիմացութեանը։ Վրա է հասնում և գաւառապետը ու բանտարկում հայհոյող հային։ Թէ ինչ կը լինի ապագայում, վաղը, միւս օրը, դրական ոչինչ ասել չէ կարելի, միայն նայած մի քանի պարագաների, խաղաղութեան շանսերը աւելի շատ են։ Վաղը ուրբաթ է, թուրքերի ազատ օրը, և եթէ վաղը խաղաղ անցնի, կարելի է վստահի կէսը անցած համարել։ Դիշերա ժամի 9-ին գաւառապետը մի քանի սարաժնիկներով պատրաստ էր գործում մի քանի փողոցներում։

Կ. Հէրբեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Օգոստոսի 3-ին

Ղամարլուի շրջանում անհատական սպանութիւնները շարունակվում են, չը նայած, որ Երևանի խաղաղարար կօմիսիայից 10 հոգի գնացին այդ շրջանը և խաղաղութիւն քարոզելով վերադարձան։

Յուլիսի 31-ին, Իմանալու գիւղում, Ալիաւան Թուրք գիւղի սահմաններին մօտ, իր սեխի բոստանում, սոսկալի տանջանքներով, մի քանի տասնեակ տեղերից կտրատված, սպանվեց այդ նոյն գիւղացի Հասրաթ Մարգարեանցը, մի աղքատ մարդ, թողնելով կինը, երկու փոքրիկ երեխաներ և երկու էլ քրոջ որբերը անտէր, անպաշտպան։ Յաջորդ օրը չարագործը յայտնի եղաւ և վկայութիւններով հաստատվեց։ Ալիաւան (գիւղացի) Քայլբլայի Իսմայիլ Շերմամադ օղլին այդ օրը իր մի քանի ընկերներով մտենալով սեխի բոստաններին, փորձեց Վարդան Սիմոնեանին և Համբարձում Խաչատրեանին ձեռք դցել սեխ առնելու պատրուակով, բայց վերջինները նրա դիտաւորութիւնը հասկանալով՝ փախան գիւղը և ազատվեցին։ Այդ դէպքից մի փոքր անց իր բոստանում քնած Հասրաթ Մարգարեանը սպանվեց։ Սպանութեան մի փորձ էլ եղաւ մի օր առաջ դարձեալ Ալիաւանի սահմաններին մօտ։ Իմանալու գիւղացի վարպետը Տիգրան Սարգարեանի աշակերտի հայրը, այցելութեան

գալով որդուն, հաղիւ կարողացաւ այդ նոյն Ալփաւանի մօտից իրան հետևող մարդկանցից փախչելով ազատվել։ Ահա այդ սպանութեան մէջ մեղադրվելով վերոյիշեալ Քեալբ. Իսմայիլ Շիրմահմուդ օղլին, ձերբակալվեց և ուղարկվեց Երևանի բանտը։ Ցիշեալ չարագործ Շիրմահմադ օղլու մասին իմ նամակագիրը հաղորդում է հետևեալը.

Յուլիսի 28-ին, Երևանի խաղաղարար կօմիսիայի 10 անդամները Ղամարլու գնալիս, ճանապարհին կանգ առան Աղամդարլու գիւղի մօտ, ուր նրանց ներկայացան հայերի և Թուրքերի կողմից պատգամաւորներ։ Թուրք պատգամաւորների մէջ էր նաև Շիրմահմուդ օղլին, որը առաջ գալով, բողոքում է, որ իբր հայերը կոտորեցին, վերջացրին Թուրքերին, որ այդ կողմերը այլ ևս Թուրքութիւն չը մնաց և այլն։ Հայ պատգամաւորներից Իսմաշալուեցի Համբարձում Այվազեանը, շատ լաւ ճանաչելով մեղադրողին և նրա խօսքերը հակառակ իր բանած դիրքին, առաջ գալով յայտնեց, որ այդ շրջանի հայ և Թուրք գիւղերի մէջ Շիրմահմադ օղլու նկարագրածի պէս դէպքեր տեղի չեն ունեցել, որ նա զրպարտում է հայերին և որ եթէ մեր կողմերում կայ մէկը, որը զրկում է Թուրքերին հայերի դէմ և աշխատում է խառնակութիւն գցել մեր շրջանը, այդ հէնց ինքը Շիրմահմադ օղլին է, որին ապացոյցայն, որ նա ուժով երկու խմաշալեցի հայերի ցորենի արտերը ուժով քաղել տարել է, որի մասին բողոք է տրված մինչև անգամ գաւառապետին։ Այդ դէպքից երեք օրից յետոյ, Շիրմահմադ օղլին ձերբակալվում է որպէս մարդասպան։ Ահա այն մարդիկ, որոնք դեռ դուրս են գալիս բողոքով խաղաղարար կօմիսիայի առաջ։ Թէ որքան դեռ ևս պիտի շարունակվեն այսպիսի դէպքեր, ոչ ոք չը գիտէ։

Ամսիս 1-ին, երեկոյեան ժամը 8-ին, քաղաքային խորհրդի դահլիճում, բաւականաչափ ժողովրդի առաջ, գիւղատնտես Ա. Սահակեանը ռուսաց լեզուով մի դասախօսութիւն կարդաց Կովկասում զեմստվօ մացնելու և զեմստվային երեք տեսակի կանոնադրութիւնների մասին։ Ժողովականների միջից եղան կարծիքներ յայտնողներ։ Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Օգոստոսի 10-ին

Առածը սուտ չէ ասում, որ «տէրվին տէրն է տարել, անտէրին գայլն է տարել»։ Բաղուից սկսած մինչև Նախիջևան Թուրքերից կոտորված և թալանված հայ ընտանիքներին, ինչպէս լրագրներից տեղեկանում ենք, զանազան կողմերից հասնում են օգնութիւններ, իսկ անտէր-անտիրական, թալանված Շարուրի եօթը հայ գիւղերը մնացած են առանց օգնութեան։ Այդ գիւղերի մօտաւորապէս 6000 հոգուց բաղկացած ժողովուրդը երկու ամսից ի վեր գտնվում է երկու կենտրօնում, այն է՝ ուլեանորաշէնցիք, մօտ 2000 հոգի, բարձրացած գիւղին կից սարի գլխին՝ տանջվում են արևից, անձրևից և ցրտից, իսկ միւս 6 գիւղերի՝ Վարմազերի, Ալաքլուի, Փարչիի, Դաշարիի և Շանգիրէյ Բազ-ի ժողովուրդը, կուչ եկած իրար վրա Խանլուխլարի փողոցներում, և մօտաւորապէս Խանլուխլարի հետ միասին կազմում են 4000 հոգի։

Մինչև հիմա մի կերպ կարելի էր փողոցներում և սարի գլխին քարշ գալ բախտի հետ, իսկ սրանից յետոյ ցրտերն ընկնում են և կրկին իրանց սովորական խաղը Շարուրի դաշտում։ Երևանցիք շտապեցին օգնութիւն հասցնել շարուրցիներին շորեղէնով և տնային իրերով. եթէ Երևանցիք այդ օգնութիւնն էլ չը հասցնէին, շատ վատ կը լինէր շարուրցիների դրութիւնը։ Վերջապէս պէտք է մի ելք գտնել և չը թողնել, որ զոհ գնան ցրտից և սովից մեր հազարաւոր հայ եղբայրները և քոյրերը։ Հարկաւոր է օգնութիւն հասցնել այդ ողորմելի շարուրցիներին, որ կարողանան վերադառնալ գիւղերը և մի կերպ վերանորոգել իրանց քարուքանդ բնակարանները մինչև գարուն։

Այս տարի վերոյիշեալ գիւղերը բոլորովին զրկվեցին իրանց ցանքերից և այգիներից, մանաւանդ վերջիններից մշտական կը զրկվեն, որովհետև ամբողջ ամառ այգիները ջուր չեն տեսել։ Շարուրի հայ գիւղերը խաղաղ ժամանակներում մեծ նեղութիւններով են կարողանում ժամանակին իրանց ցանքերը ջրել, նրանց ջրաբեր առուները Թուրքերի հետ միասին անբաժան են, բացի Ուլիանորաշէնից. Թուրքերի բոլոր գիւղերը ընկած են վերև, իսկ հայ գիւղերը ներքև, առուներն էլ հօ սկսվում են վերևից, Արփաչայի երկաթէ կամուրջի տակից։

Կ. Յակոբեանց

ԻՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1½ թերթից։

Թիֆլիսի թեմի սրբազան առաջնորդը, որ մի քանի օրով գնացել էր Սանահնի վանքը հանգստանալու, երէկվանից վերադարձել է արդէն Թիֆլիս։

Այսօր, օգոստոսի 2-ին, երեկոյեան ժամը 6-ին Թիֆլիսի հայոց առաջնորդարանում Թիֆլիսի թեմի առաջնորդի հրաւէրով կայանալու է ժողով Թիֆլիսի հայոց բոլոր եկեղեցիների աւագերէցներից և երէցփոխներից։ Ժողովի նպատակն է բացվելիք դպրոցների մասին խորհրդակցութիւնը։—Լսում ենք որ սրբազան առաջնորդը արդէն ուղարկել է իր թեմի բոլոր յաջորդներին ու գործակալներին պատշաճաւոր հրահանգներ դպրոցներ բանալու մասին։ Այդ շրջաբերականի պատճէնը կը տանք շուտով։

«Աչքի առաջ ունենալով հայ և Թուրք աղգաբնակութեան մէջ տիրող յուզված դրութիւնը, որ ստեղծեցին Բաղուի և Երևանի դէպքերը ազգային թշնամութեան հողի վրա,—ասում է «Кавказъ» լրագիրը։—Գանձակի նահանգական իշխանութիւնը անհրաժեշտ է համարում ուժեղացրած պահպանութեան վիճակը շարունակել Գանձակ, Նուխի և Շուշի քաղաքներում»։

Թուրքեստանի գեներալ-նահանգապետը տեղեկացրել է զինուորական մինիստրին, որ ինքը յայտարարել է Թուրքեստանը ուժեղացրած պահպանութեան վիճակում մի տարի ժամանակով, սկսած 1905 թի յուլիսի 16-ից։

Անիի պեղումները ընդարձակելու համար ստացանք Միհրան Մարիմեանից (Բաղու) 5 բուբլի։

Թիֆլիսի թեմի առաջնորդը Բաթումից ստացել է հետևեալ հեռագիրը օգոստոսի 22-ից. «Բաթումի հայ հասարակութիւնը, կարդալով Բաղուից խփված գործակալական հեռագիրը Շուշու կոտորածի յանցաւորների մասին օգոստոսի 21-ից, դիմում է ձեր բարձր սրբազնութեանը խնդրելով միջնորդել բարձր իշխանութեան առաջ պարզելու, թէ որքան է համապատասխանում ճշմարտութեան այդ հեռագրի բովանդակութիւնը, որովհետև դա գրգռում է խաւար ամբոխի միտքը»։ Լիազօրներ հայ հասարակութեան—Մես. աւագ քահ. Մելեան, Ե. Խուդաղեան, ինժենէր Մարկոսեան»։

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանեանը, ինչպէս հաղորդում են նոյն տեղից Վիէննայի «Neue Freie Presse» լրագրին, խնդրել է Կ. Պոլսի ռուսաց դեսպան Զինովիեվին ինչպէս իր, այնպէս էլ Թիւրքիայի հայ լուսաւորչական եկեղեցու շնորհակալութիւնը արկանել առ ռուս Նորին Կայսերական Մեծութեան հայոց եկեղեցապատկան կալուածների վերադարձման և հայոց ուսումնարանների վերաբացման մասին բարձրագոյն ուկազի համար։

Ինչպէս յայտնի է, անցեալ ուսումնական տարում Թիֆլիսի պրաւօսլաւնի սէմինարիայի և վիճակային հոգևոր դպրոցի սաներից արձակել էին ահագին թւով պատանիներ ու աշակերտուհիներ զանազան խառնակութիւնների պատճառով։ Պետերբուրգից ս. Սինոդը հրամայել է նորից քննել այդ արձակված սաների գործը և վերընդունել նրանց։ Այդպէս էլ արված է. բոլորը նորից ընդունվել են իրանց դպրոցները։

Վրաց մանկավարժ պ. Գօգէբաշվիլին մի զեկուցում է ներկայացրել Կովկասի Փոխարքայի դիւանին՝ Կովկասում ժողովրդական հավալարան հաստատելու հարցի մասին։

Զէստաֆօնից, օգոստոսի 21-ին, հեռագրում են «Իվէրիա» լրագրին. «Զվանկիջի գիւղում գիւղացիներն ընդհարում ունեցան աղնուականների և սարաժնիկների հետ։ Ասում են, որ սպանվածների թիւը տասն է, իսկ վիրաւորվածներինը—վեց»։

«Իվէրիա» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսի առաջին արական գիմնազիայի դիրեկտօր է նշանակված Ի. Գեմիրէլիէ, որը կը սկսէ իր պաշտօնավարութիւնը ուսումնարանական շրջանի հոգաբարձուի Թիֆլիս վերադառնալուց յետոյ։

«Յնօրիս Փուրչէլի» լրագիրը հաղորդում է, որ Մուխրանգիւղում, օգոստոսի 16-ին, անյայտ անձինք օղն են թոցրել իշխան Էստատէ Մուխրանսկու տունը։ Տան մէջ եղողները անվնաս են մնացել։

Գօրուց հաղորդում են օգոստոսի 21-ին, որ առաւօտեան ժամը 9-ին այնտեղ սարձանակի հարուածներով սպանվել է տեղի պրիստաւ Աւալօվը։ Սպանողը փախել ազատվել է։

Պետերգօրսկի մօտ Սէֆէրօվա գիւղում բռնվել է երկու արկղ բերդան, սարձանակ և փամփուշտ։ Ձերբակալվել է մի ախալցխացի հայ երիտասարդ՝ Խորէն Խաչքավանքցեան անունով։

Օգոստոսի 20-ին Սուխումի բանտից փախել են 6 հոգի շատ կարևոր կալանաւորներ։

«Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հեռագրում է իր լրագրին Պարիզ, որ ընդհանուր ներում կը հրատարակվի խաղաղութիւն կնքելուց յետոյ։ Դրա հետ միասին հրատարակվելու է նաև Բարձրագոյն ուկազ զեներալ Տրեպովին ներքին գործերի մինիստր նշանակելու մասին։

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Քաղաքիս հայ եկեղեցիներից երեքը այսօր առանց երէցփոխների են մնացել և այդ պաշտօնը ժամանակաւորապէս կատարում են միաբան քահանաները մինչև նոր երէցփոխի ընտրութիւնը։ Կիրակի, ամսիս 14-ին, ս. Փրկիչ եկեղեցում հայր Ղազարեան քահանան մի ծանուցումով յայտարարեց, որ մօտ օրերս լինելու են ընտրութիւններ թէ երէցփոխ ընտրելու և թէ հոգաբարձուներ նշանակելու, որոնք Փոխարքայի տուած ժամանակաւոր հրահանգի համաձայն կառավարելու են եկեղեցու գոյքերը։ Նախընթաց ժամանակներում մեզանում ծխական ընտրութիւններին մասնակցում էր քաղաքի ամբողջ հայ հասարակը և ծխաբաժնութիւն չը կար։ Սակայն այժմ, ինչպէս յայտնեց հայր Ղազարեանը, հողևոր իշխանութեան կարգադրութեամբ, մեզանում էլ պէտք է լինեն ծխաբաժանումներ, այսինքն ամեն մի եկեղեցու ծխականները ժողովներին կամ ընտրութիւններին իրաւունք ունեն մասնակցելու միայն այդ եկեղեցու ծխականները։ Օրինակ, ս. Փրկիչ եկեղեցու երէցփոխի և հոգաբարձութեան ընտրութեան ժողովներին պիտի մասնակցեն միայն այդ եկեղեցու ծխականները և ոչ ամբողջ Ախալցխայի հայ աղգաբնակութիւնը, ինչպէս որ լինում էր նախընթաց տարիներում։ Ահա այս ծխաբաժանումը, որքան հեռևում ու լսում ենք, առիթ է տուել մեր ժողովրդի տարաբնիներին և անբաւականութիւններին։ Կարող է այս բանը առիթ դառնալ, որ միւս եկեղեցու ծխականները դուրս գան իրանց եկեղեցուց և գրվեն իրանց ցանկացած եկեղեցում որպէս ծխական, որի համար քանի դեռ շուտ է, հրաւիրում եմ հոգևոր իշխանութեան լուրջ ուշադրութիւնը դրա վրա»։

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 20-ին տեղիս հայ և Թուրք բնակիչները վաղուց ի վեր միշտ հաշտ, միշտ համերաշխ են եղել, իրարև կողք-կողքի կպած բարի հարևաններ։ Բաղուի, Նախիջևանի, այժմ էլ Շուշու ցաւալի դէպքերը մաղաչափ անգամ չեն փոխել այդ երկու տարրերի բարեացակամ յարաբերութիւնները։ Ընդհակառակը, աւելի են ամրացել, աւելի մտերմացել։ Եւ Նուխին, իրօք, կարող է իրարև օրինակ ծառայել շատ ուրիշ քաղաքներին։ Փոխադարձ յարգանք դէպի երկու ազգերի թէ հոգևորականութեան ներկայացուցիչներին և թէ այլ պատուաւոր անձանց։ Նորերս վախճանված մի հայ վաճառական իր մահվանից առաջ մի փոքրիկ գումար էր նուիրել քաղաքիս հայ եկեղեցիներին և երկու մէջիդներին՝ սիւնի և շիտ։ Այդ նուիրատուութիւնը Թուրքերի վրա զեղեցիկ տպաւորութիւն է թողել»։

ԳԼԴԱՆԻՑ մեզ գրում են. «Գլդան գիւղում ոստիկանութիւնը բռնել էր տուել մի քանի կազակներ։ Գիւղացիք վախեցան և ոստիկանութեանը յայտնեցին, որ կազակներին հեռացնեն գիւղից, խոստանալով, որ այլ ևս անկարգութիւն չեն անի։ Գիւղացիք ստորագրութիւն տուին ոստիկանութեանը, պարտաւորվելով 4000 ր. տուգանք տալ, եթէ գիւղում որ և է խառնակութիւն պատահի։

ՄԵՂՐԻՒՑ մեզ գրում են. «Մեղրիից Օրդուբաթ հաղորդակցութիւնը վերսկսված է, սակայն շատ զգուշութեամբ։ Անցեալ յուլիս ամսի 22-ից սկսած և մինչև 30-ը շարունակվող յորդ անձրևները բաւական ջնաս հասցրին թէ հնձելի ցորենի արտերին և թէ ցորենի դէզերին։ Զանգեզուր գաւառի պղնձահանքերի կողմերում աւազակային խմբեր են երևացել, որոնք անհանգիստ են անում թէ գիւղացիներին և թէ անցորդներին։ Ղարաչիների մի խումբ Նախիջևանի կողմերից անցնելով, գնացել կանգ էր առել այդ նոյն պղնձահանքի մօտերքում՝ գետափին։ Նրանց մէջ վէճ է սկսվում, որը փոխվում է կռիւ. նրանցից մէկը սպանում միւսին։ Լուրը հասնում է ոստիկանութեան. վերջինս շրջապատում է նրանց. մինչև այդ, խմբի մեծ մասը փախչում է Սիսիանի կողմերը։ Ոստիկանութիւնը կասկածելով, խուզարկում է դրանց, որի ժամանակ ղարաչիները բաւական իրեր են թափում գետակը, իսկ մի մասը առնում են։ Նրանցից մի կնոջ վրայից հանում են 1400 բուբլի կանխիկ փող։ Ղարաչիները խոստովանում են, որ այդ ամենը թալանից են ձեռք բերել։ Կալանաւորված են հինգ հոգի»։

ԲԱՐԱՆԱ գիւղից (Ղազախի գաւառ) մեզ գրում են. «Աստուածածնի ծոնի օրը, պատարագից յետոյ, մաղթանք կատարվեց Թագաւոր Կայսրի արեշատութեան համար եկեղեցական կալուածների վերադարձման և ծխական ուսումնարանների վերաբացման առիթով։ Մաղթանքի նշանակութիւնը բացատրեց խուռն բազմութեանը գործակալ Յովհաննէս քահանայ Տէր-Խաչատրեանը։ Ժողովրդի ուրախութիւնը անսահման էր»։

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 14-ին տեղիս ս. Լուսաւորիչ եկեղեցում, պատարագից յետոյ, Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեան համաձայն, հանդիսաւոր մաղթանք կատարվեց. պատարագիչ Տիգրան քահանան աւետեց ժողովրդին հայ լուսաւորչական եկեղեցիների կալուածները վերադարձնելու և հայ դպրոցների բացվելու լուրը, և դրանց նշանակութիւնը հայերի համար։ Այստեղի հայ ժողովրդից էլ այդ առթիւ հեռագիրներ ուղարկվեց հայոց ծերունազարդ Հայրապետին»։

ՄԱՅԿՕՊԻՑ մեզ գրում են. «Ամսիս վերջերին կը կայանայ տեղիս առաջին և միակ, ս. Լուսաւորիչ եկեղեցու օծումը։ Տեղիս հայ հասարակութիւնը սպասում է թեմական առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի գալստեան։ Տեղս է նաև Ե. Ա. Բաղդասարեանը, որին հրաւիրել են եկեղեցու այդ հանդիսաւոր օծման համար քառաձայն երգեցիկ խումբ կազմելու։ Անցած կիրակի մեր եկեղեցում, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, գոհաբանական մաղթանք կատարվեց Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրի և Օգոստափառ ընտանիքի արեշատութեան համար։ Հայ եկեղեցական կալուածքների և հայ ուսումնարանների վերադարձնելը մեծ կենդանութիւն առաջացրեց տեղիս մեռած, անգոյն հասարակութեան մէջ։ Ցոյս ունենք, որ տեղիս բանիմաց հասարակութիւնը օր առաջ կը պատրաստվի օգտվելու բարձրագոյն շնորհից՝ բանալու շուտով աղգօգուտ հիմնարկութիւնները»։

Գանձակի ՆՈՐԱՇԷՆ արուարձանից մեզ գրում են. «Օգոստոսի 19-ին, ժամը 10-ին, Նորաշէնում ամեն ինչ խաղաղ էր, ընդհարման ոչ մի նշոյլ նկատելի չէր։ Ցանկարծ մէկը միւսի ետևից սարսափը, երկիւղը, զարհուրանքը պաշարեցին Նորաշէնցիներին։ Քաղաքից տխուր գոյժը կայծակի արագութեամբ հասաւ մեզ—իբր թէ սկսվում է կոտորածը։ Այս լուրը զարհուրանքով լսեց ամեն մի Նորաշէնցի։ Սկսվեց «քօչը»—մի չը տեսնված բան։ Փախչում են միմեանց ետևից, փակում են հարայ-հրոցով խանութները, շտեմարանները. փախչում են կառքերն ու ֆուրգոնները մի ահագին շփոթ բարձրացրին, սկսեցին տեղափոխվել հայոց Թաղը, որը մեզանից (Նորաշէնից) հաստատ երկու վերստ հեռաւորութեան վրա է գտնվում. Թողնում են խ-

բանց տները, կայքը, այգին, մի խօսքով ամբողջ հարստութիւնը և փախչում, ահագին աւարը թողնելով շրջակայ Թուրքերին։ Քաղաքից դատարկ կառքեր են գալիս ապրանք տանելու։ Հարցնում ենք—ինչ կայ քաղաքում։—Ոչինչ, լինում է պատասխան։ Դարձեալ կառքեր են գալիս, դարձեալ հարցնում ենք։—Մի քանի տեղ շուկայում խանութները արագ փակում են թէ հայերը և թէ Թուրքերը, բայց թէ ինչու, չենք կարողանում հասկանալ։ Անորոշ պատասխաններ։ Մնացել ենք արձանացած, մի անսովոր սարսափի մէջ։ Յանկարծ նկատեցինք, որ դէպի մեզ գալիս է շուկայի կողմից ամենայն արագութեամբ մի կառք։ փոշին, որպէս մի ամպ վեր էր բարձրացել մինչև երկինք։ կառքի մէջ նկատվում են երկու անձնաւորութիւններ, թանձր փոշին խանգարում էր ճանաչել նրանց։ Կառքը եկաւ հասաւ մեզ։ նրանցից մէկը Թուրք հասարակութեան կողմից ներկայացուցիչ պ. Ալէկպեար-բէգ Բաֆիբէկօֆն էր, իսկ միւսը հայ ժողովրդի կողմից բժիշկ պ. Ամիրխանեանը։ Նրանց գալուստը շատ բերկրալի եղաւ վախկոտ Նորաշէնցիների համար, որոնք փոքր ինչ հանգստացան։ Արժանաւոր ներկայացուցիչները հանգստացրին մեզ և խօսեցին մեր երկրի ազգութիւնների հաւասարութեան մասին, ասելով. դուք ապահով կացէք, մենք անմիջապէս կը խնդրենք, որ ձեզ զօրք ուղարկվի», և գնացին. արդարև էս ժամ չանցած եկաւ պահակախումբը և սկսեց շրջել Նորաշէնի փողոցներում»։

—

ՆՈՐ-ԶՈՒՂԱՅԻՑ մեզ գրում են. «Բագրատ վարդապետ Վարդազարեանի խմբագրութեամբ հրատարակվող «Նոր-Զուղայի լրաբեր»-ը, որի հրատարակութիւնը սրանից մօտ երեք ամիս առաջ պարսից կառավարութեան կողմից դադարեցրվել էր, մօտ օրերս նորից կը սկսէ հրատարակվել, վերոյիշեալ կառավարութեան տուած պաշտօնական կարգադրութեամբ։»

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ինչպէս լսում ենք, մեր բացվելիք հայոց դպրոցների համար ծրագիր է կազմվում ընտրված մասնաժողովի անդամների ձեռքով, որոնք պէտք է հրաւիրեն նաև ձեռնհաս ուսուցիչներին մասնակցելու գործին։ Իսկ մեր համեստ կարծիքն է, որ գործը որպէս շատ լուրջ գործ աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ ամեն մի գաւառական քաղաքում էլ այդ մասին ուսուցչական ժողովներ կազմվէին, ուր կազմվելիք ծրագրի մասին յայտնած կարծիքները արձանագրվէր և ներկայացվէին կենտրոնին։ Այդպիսով՝ Թիֆլիսի մասնաժողովը այդ կարծիքներից նիւթեր քաղելով՝ ոչ միայն շուտափոյթ, այլ և անթերի կը կատարէր գործը։ Թէև ընտրվածները բոլորն էլ լուրջ մարդիկ են և հաւանական է, որ բոլոր աչքի ընկնող մանկավարժներն էլ կը հրաւիրվեն գործին մասնակցելու, ինչպէս հրատարել է Վեհափառը, այնու ամենայնիւ՝ պէտք է աչքի առաջ ունենալ նաև գաւառական փորձված, կենսքի դասին աւելի ծանօթ ուսուցիչներին։ Շատ անգամ որ և է հարցի մասին մի անուս գիւղացու յայտնած կարծիքը ջրում է մասնագէտ զարգացածի ամբողջ ճառը։ Ժողովուրդը մի լաւ խօսք ունի այդ մասին, որ ասում է, «կայ աշխարհում՝ չը կայ անապատում, կայ անապատում՝ չը կայ աշխարհում։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բրիւսէլի «Rallemenet» լրագիրը, Կ. Պոլսում բէլգիացի Ժօրէսի կալանաւորման առիթով, որպէս սուլթանի կեանքի դէմ փորձ ասողի,—մի Թունդ յօդուած տպեց։ Լրագիրը յայտնում է, որ բելգիական կառավարութիւնը իրաւունք ունի պահանջելու, որ Ժօրէսն յանձնվի Բէլգիային, որ նա կը դատվի Իրաքանի քրէական դատարանում։ Ապա բերելով երկու հռչակաւոր իրաւաբանների կարծիքը, յօդուածի հեղինակը բերում է այն դաշնագրի ընագիրը, որ կապված է 1838 թւի օգոստոսի 8-ին Բէլգիայի և Թիւրքիայի միջև։ Այդ դաշնագրի 8.րդ յօդուածն ասում է. «Բ. Դրան հպատակների և բէլգիական թագաւորի հպատակների միջև վէճերի կամ դատերի դէպքում, վիճող կողմերը հարցուփորձի են ենթարկվում և վէճի պատճառը պարզվում է միայն Բէլգիայի դեսպանատան թարգմանի ներկայութեամբ։ Տեղական իշխանութիւններն իրաւունք չունեն կալանաւորել իրանց առաջարով շիտակութեամբ և հանգիստ պարապող բէլգիացիներին։ Որ և է յանցանքի դէպքում գործը առաջարկվում է դեսպանի, կամ նրա լիազօրի՝ հիւպատոսի կամ փոխ-հիւպատոսի քննութեանը։ Մեղադրվողներին նրանք կը դատեն և կը պատժեն ֆրանսիացիների համար սահմանած կանոններով։ Այդպիսով, եթէ բէլգիացին յանցանք կը գործէ Թիւրքիայում և մինչև անգամ Թիւրքի դէմ, նա ենթարկվելու է բէլգիական իշխանութիւնների դատաստանին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

19 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 օգոստոսի։ Կիևո-Պէչօրսկայայա վանքի տեղապահը հերքում է մայրաքաղաքի լրագիրներից մէկի այն տեղեկութիւնը, որ իբր թէ վանքը մէկ և կէս միլիոն ռուբլու դրամագլուխ ունի։ Վանքի դրամագլուխը կազմում է մի քանի հարիւր հազար ռուբլի։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 22 օգոստոսի։ Վիտէի, Ռօզէնի և Կօմուրայի միջև տեղի ունեն մասնաւոր խորհրդակցութիւններ։ Դաշնագրի պատճէնները պատրաստ կը լինեն վաղը։

ԼՕՆԴՕՆ, 22 օգոստոսի։ Նիւ-Կէսալից ստացված հեռագրի համաձայն, երկու կողմերի լիազօրները յոյս ունեն, որ խաղաղութեան դաշնագիրը կը ստորագրվի երկուշաբթի։ Դաշնագիրը ստորագրելուց յետոյ ռուսաց լիազօրները կերթան Նիւ-Եօրկ, իսկ յետոյ Վիտէն կայցելէ համալսարանը Զիկագօում՝ աստուածաբանութեան դոկտորի կոչում ընդունելու համար։

ԿԱԼԿՈՒՏՏԱ, 22 օգոստոսի։ Տեղացիների մէջ սաստիկ յուզմունք է տիրում Բէնգալեան նահանգի բաժանման վերաբերեալ նախագծի առիթով։ Սկսված շարժումը անկասկած Թընտանական բնաւորութիւն է կրում։

ԳՈՒՆՁԺՈՒԼԻՆ, 22 օգոստոսի։ (Յեփ. Թղթակցից)։ Ճակատի վրա փոփոխութիւններ չը կան։ Անձրևները դադարեցին։ Եղանակը տաք է։ Կօրէայում մեր զօրաբաժինները յետ մղեցին Շչաշնիշաքուաբի, Տուսագան գետի ետևը։

ԼՕՆԴՕՆ, 22 օգոստոսի։ Այստեղ հաւատ չեն ընծայում Հռօմից հաղորդած լուրերին յեղափոխութեան մասին Եապօնիայում։ Ճիշտ չեն այն տեղեկութիւնները, թէ ստորջրեայ հեռագրաթելերը կտրված են. հիշդ է, որ փոթորիկից վնասվել են հեռագրական հաղորդիչները Շանգհայի մօտ և Պէկինի շուրջը։ Եապոնական հեռագրաթելի ծայրը անվնաս է։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 22 օգոստոսի։ Միկադօն ուղարկեց Ռուզվէլտին հետևեալ հեռագիրը։ «Մենք գոհունակութեամբ ստացանք այն գրութիւնը և շնորհաւորութիւնները, որ դուք ուղարկեցիք մեզ մեր լիազօրների միջոցով։ Մենք ջերմագէս շնորհակալութիւն ենք յայտնում ձեզ այն անշահասէր և անդուլ ջանքերի համար, որոնք արված էին ի շահ մարդկութեան՝ խաղաղութեան հասնելու համար, արժանապէս գնահատում ենք այդ ջանքերը և խնդրում ենք ձեզ ընդունել հաւատիացումներ, որ մենք շնորհակալութեամբ խոստովանում ենք այն անշահասէր դերը, որ դուք խաղում էիք խաղաղութեան դաշն կապելու հարցում, հիմնված այն սկզբունքների վրա, որոնք անհրաժեշտ են բարօրութեան և յաւէրժական հանգստութեան համար Ծայրագոյն Արևելքում։

ՀՌՕՄ, 22 օգոստոսի։ «Տրիբունա» լրագիրը հաստատում է Եապոնիայի հարաւում յեղափոխական շարժում սկսվելու տեղեկութիւնը։ Եապոնիան ցամաքի հետ միացնող մի քանի հեռագրական կաբէլներ կտրված են։ «Տրիբունա» լրագիրը երաշխաւորում է այդ հաղորդագրութեան ճշտութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Լինէվիչի ամենահպատակ հեռագիրը 1905 թւի օգոստոսի 21-ից։ «Կօրէայում օգոստոսի 19-ին մինչև ցերեկվայ 12 ժամը մեր զօրաբաժինը յետ մղեց եապոնական վեց բատալիօնների 12 թնդանօթով եռանդուն յարձակումները։ Միաժամանակ եապոնացիները արշաւում էին մեր զօրամասերի վրա Կիանկօրօդուայի մօտ և Պէչուգուլիենդ լեռնաշղթայի վրա։

—Ֆինլանդիայի բնակիչ Կարլ Պրօկոպէն, որ դատապարտված է մահվան Պետերբուրգի զինուորական դատարանի կողմից, փոխ-զնդապետ Կրամարենկօի սպանութեան համար—արժանացաւ պատժի թեթևացման. մահվան պատիժը փոխարինվել է մշտական տաժանակիր աշխատանքի։

Օգոստոսի 21-ին Պետերհօֆում տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ Բարձրագոյն ներկայութեամբ պարսից շահի դալատեան առիթով։

ԿԻՇԻՆԵՎ, 22 օգ։ Թաղեցին կողոպտիչների սպանած հրէուհուն։ Հրէաների 5000 հոգուց բաղկացած ամբոխը, որ դէմոնստրատիվ կերպով ուղեկցում էր դագաղին, կազմեց հակակառավարական ցոյց։ Ռուս բանուորները յարձակվեցին ցուցարարների վրա։ Տեղի ունեցաւ ընդհարում։ Հրաւիրված զօրքերը ցրեցին ամբոխը։ Վիրաւորված են 55 հոգի։ Ձերբակալվեցին 30 մարդ։

ԳԱՆՁԱԿ, 22 օգ։ Շուշում հանգստութիւն է, բայց ճանապարհը դեռ անվտանգ չէ։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 22 օգոստոսի։ Խաղաղութեան դաշնագիրը կազմված է ներածութիւնից և 15 յօդուածներից։ Պաշտօնական ստորագրութիւնները կը վաւերացնեն լիազօրների շրխմբերի անդամները, Նիւ-Հէմպշիրի նահանգապետ Մակլէնը, ծովապետ Մէդը, Պօրտսմուտում գտնվող ամերիկական մարտանաւերի հրամանատարները և պետական քարտուղարի օգնականը։ Դաշնագրի հաստատումը հաւանօրէն տեղի կունենայ 50 օրվայ ընթացքում։ Պաշտօնապէս հաղորդված է, որ դաշնագրի խսկականը Պօրտսմուտում չէ հրատարակվելու։ Ներէկ Վիտէն ասաց մամուլի ներկայացուցիչներին. «Դուք կարող էք յայտարարել ամբողջ Եւրոպային ու Ամերիկային, որ մենք պատրաստ ենք հրապարակ հանել դաշնագիրը, հէնց որ հրապարակ հանվի անգլօ-եապոնական համաձայնութեան գիրը»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգ։ Ժամանեց պարսից շահը 3 պրինցների հետ միասին, նախաճաշեց պարսկական դեսպանատանը, և մի և նոյն օրը մեկնեց Պետերհօֆ։ Պետերբուրգը զարդարված էր դրօշակներով։

23 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լրագրական տեղեկութիւնների համեմատ, մերձակայ բէֆօրմներից մէկը կը լինի իսկական զինուորական ծառայութեան կրճատումը։ Զինուորական ծառայութիւնը միայն տասը տարի կը շարունակվի, իսկ իրապէս ծառայութեան մէջ մնալը կը կրճատվի մինչև երկու տարի։ Մտադրութիւն կայ առանձին ուշադրութիւն դարձնել գրագիտութեան զարգացման վրա զօրքերի մէջ։

ՊԱՐԻԶ, 22 օգոստոսի։ Եապոնական մարտական կտրականապէս հերքում է այն լուրը որ իբր թէ Եապոնիայում յեղափոխութիւն է բռնկվել։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 22 օգոստոսի։ Դաշնագիրը դեռ ևս չէ ստորագրված։ Եապոնական ցուցակը ստորագրված է, իսկ ռուսականը դեռ ևս չէ աւարտված։ Ուշացաւ այն պատճառով, որ լիազօրների քարտուղարները, գաղտնիք պահելու նպատակով, իրանք են արտագրում ակտը։ Պետական դեպարտամէնտի յատուկ կանչված գրագիրներին թոյլ տուին արտագրել։ Ռուսները կանոնաւոր ճանաչեցին եապոնական ցուցակը։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 22 օգոստոսի։ Դաշնագրում մտցրված յաւելուածի մէջ ասված է, որ վերջինի ստորագրման վայրկեանից զինադադար է սկսվում, որից յետոյ բանակները պէտք է դադարեցնեն արշաւումը և մնան իրանց տեղերում։ Յօդուածներից մէկը սահմանում է, որ գերիները հայրենիք կը վերադարձվեն միայն դաշնագիրը վաւերացնելուց յետոյ։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 23 օգոստոսի։ Լիազօրները հեռագրեցին դաշնագրի ընագիրը իրանց կայսրերներին։

ԼՕՆԴՕՆ, 23 օգոստոսի։ «Ստանդարդ» լրագիրը քննում է մերժման հնարաւորութիւնը մեծ-բրիտանական կառավարութեան կողմից՝ թոյլ տալ եապոնացիներին ապրել անգլիական կղզեանիներում։ Լրագիրն ասում է, որ եւրոպացիները չեն կարող սրցել Անգլիայի և Ծայրագոյն Արևելքի տնտես և խոհուն ասիացիների հետ։ Մրցումը հնարաւոր է միայն աշխատանքի այնպիսի ճիւղերում, որոնք յատուկ են բացառապէս արևմտեան մարդկանց, այդ պատճառով հարցը պէտք է քննվի ոչ թէ ցեղական կամ դոյնի, այլ բացառապէս տընտեսական տեսակէտից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
„ՓԵԹԱԿ"
ՕՐ. Մ. ԲԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ
Աշակերտուհիների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, առաւօտեան ժամը 9 ից մինչ. 4-ը։ Ընդունվում են և դիշերօթիկ աշակերտուհիներ։ Ցանկացողները կարող են ստանալ ուսումնարանում մանրամասն ծրագիր ձրիաբար։ Архивный пер. д. № 4. (չ.ո.կ.) 4—6

ԼՈՑՍՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
Պատմական վէպ
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՕՊԷԿ։
Ծախվում է 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը, 2) Թիֆլիսի գրավաճառանոցներում։
Գրավաճառները և գումարով գնողները զիջում կը ստանան, եթէ դիմեն ուղղակի հեղինակին։

ВЪ ЦЕНТРАЛЬНОЙ КНИЖНОЙ ТОРГОВЛѢ
поступили въ продажу новыя книги.
Джаваховъ И. К. Изслѣдованіе о государственнымъ строѣ древней Грузіи и древней Арменіи, С.-Пб-, 1905 ц. 1 р. 35 к. пр- 25 к.
Мироніевъ М. А. О положеніи Русскихъ. инородцевъ С.-Пб. ц. 2 р. пер. 40 к.
Ромоновскій В. Е. Государственныя учрежденія древней и новой Россіи изд., 2 исправленное и значительно дополненное, Т. 1905, ц. 2 р. пер. 40 к., его же Очерки изъ исторіи Грузіи, Т. 1902 ц. 3 р. пер. 40 к.
Чалхушіанъ. Армянскій вопросъ въ Россіи, ц. 10 к. пер. 9 к. (չ. մ. ս. 1-ը)

Դպրոց եւ Պանսիօն
Գ. Լ. ԿՈՒԶԱՆՕՎԻ
Վերսկսում է աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից։ Պարապմունքներն սկսվում են սեպտեմբերի 1-ից։ Պանսիօնում ընդունվում են և միջնակարգ դպրոցների աշակերտները, դասերը նախապատրաստելու պայմանով։ Երկրորդ յարկ, տուն Իս. Իվ. Աբրահամեանի Վելիկօկնեաժսկի փողոց (նախկին Նաբերեժնի) № 9 իսկ Միքայէլեան փողոցից № 34, Վօրոնցովի արձանի մօտ։
(14, 18, 20, 26, 28) 4—5

1905 թ. սեպտեմբերի 1-ից բացվում է
Ս. Լ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Դպրոցը եւ Պանսիօնը
Ելիզավետինսկի փողոց, սեփական տուն № 117 (Կիրօչնի փողոցից երրորդ տունը)։
Ֆրանսերէն, գերմաներէն լեզուների եւ ՄՈՒԶԻԿԱՅԻ թեորիան ու պրակտիկան։
Հրաւիրված են փորձված դասատուներ։ Պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար մինչև III դասարան։ Դպրոցի և պանսիօնի շինութիւնը լիապէս պատասխանում են առողջապահութեան պահանջներին։ Ընդունելութիւնը օգոստոսի 20-ից։
(ե. հ. կ.) 2—10

Նկարիչ Բ. Ճէպէյեանի
Հայկական եկեղեցական ՊԱՏԿԵՐՆԵՐԻ,
ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ
և ոսկեզօծելու արհեստանոց
Ընդունվում են ՄԻՄԻԱՅՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ. Զուսներ եկեղեցիներին տրվում է ապառիկ նպաստաւոր պայմաններով. պատուէրները կատարվում են ընտիր
ՀԱՅԿԱԿՆ ՃԱՇԱԿՈՎ
Тифлисъ, Гановская № 7. Б. Джебеяну.
Ցուցակը և պայմանները ուղարկվում է ձրիաբար։
(հ. կ.) 6—6

Զգուշացէք կեղծումներից
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Դեղագործ
Ի. Ֆ. ԻՒՐԳԷՆՍԻ
Ոչնչացնում է պղուկները, այրվածքները, դեղին բծերը, ուռոյցքները և ազդում է աւելորդ քրտնաբերութեան վրա. ոչնչացնում է վատ հոտը։ Ցանձնարարվում է իբր տուալէտի անուշահոտ սապօն բարձրագոյն տեսակի։
Ոսկի մեդալ Լօնդոնում 1893 թ.
Կտորի գինը 50 կ., 1/2 կտորը 30 կ.։ Ծախվում է բոլոր ամենալաւ դեղատներում, դեղապահեստներում և անուշահոտութիւնների խանութներում։
Բոլոր Ռուսաստանի համար գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ (4, 19) 21—24

Այս լայտարարությունը տպված է „Правительств. Вѣстникъ"-ի № 43/1903 թ.

Գրասենյակից

Գրախանութ Գրիգորի վաճառում են Ղ. Աղայանցի հետևեալ աշխատութիւնները.

Ուսումն Մարդկի լեզուի, Ա. տարի	—	15
» » » Բ. »	—	30
» » » Գ. »	—	70
» » » Դ. »	—	20
» » » Ե. »	—	60
Գրքերիկ հարցաց	1	50
Գիտնական Մանուկ	—	30
Բանաստեղծութիւններ	5	—
Հեքիաթներ, Ա. և Բ. մաս	84	—
Տարբերակ ֆիզիկա դասագիրք	30	—
Ալգեբրայի դասագիրքի համար առանձին տպված նիստերով դասագիրքը հա ստանան բաւական դիպ.	1—4	

Հայ բնատեր ընդունում է մի՞ն երկու գիշերօթիկ մի՞ջնակարգ դպրոցների աշակերտներ։ Դիմել՝ Գրիգորի դպրոցում։

Կենտրոնական Գրադարան։ Գրքերի հանրագիր։ Գրքերի հանրագիր։ № 11, Ջալալեանի քարտարան։ (Ն. ս.) 1—2

Գրասենյակ

Ընդունում է գրքեր հրատարակելու համար։ Գրքերի հանրագիր։ Գրքերի հանրագիր։ № 11, Ջալալեանի քարտարան։ (Ն. ս.) 1—2

Կենտրոնական գրադարան

Ստանալու Մարտի, ոսկերչութիւն 5 տարբ. գ. 30 կ. ճ.ն. 13 կ.։ Շիրազ, պատմութ. պատմութ. 30 կ. ճ.ն. 13 կ.։ Գուլուզադեանի. 30 կ. ճ.ն. 11 կ.։ Ժառանգիր. 30 կ. ճ.ն. 13 կ.։ Բերան. Սառգիս, 30 կ. ճ.ն. 11 կ.։ Գոռ. Նրկն, մեկ, 30 կ. ճ.ն. 13 կ.։ Շուշան. օպերա 3 տարբ. 1 գ. ճ.ն. 20 կ.։ Երգերի ժողովածու, ճ. տ. 1 գ. ճ.ն. 20 կ.։ Հատոր 1 գ. ճ.ն. 20 կ., ճ. հատոր 1 գ. ճ.ն. 20 կ., գ. հատոր 1 գ. ճ.ն. 20 կ.։ Հատոր 1 գ. ճ.ն. 20 կ., գ. հատոր 1 գ. ճ.ն. 25 կ.։ Մի քանի հատ, 1 գ. ճ.ն. 25 կ.։ Մի քանի հատ գրքեր պահանջողները թող դիմեն Գ. Ս. Մ. Ղ. Ի. Տ. Ա. Ի. Ֆ. Ս. Ս. Ի. Ի. Ֆ. Ս. Ս. Ի. Ի. Ֆ. Ս. Ս. Ի